

# ԲԱԳՐԱՏԻՈՆ



355 Գ  
Բ-89

ՊԵՏՆԱՏ

39

MAR 2010

3559-

Ս. ԲՈՐԻՍՈՎ

Բ-89

*Handwritten mark*

# ԲԱԳՐԱՏԻՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939


26.02.2013

40.566

Ս. Բորիսով. Բագրատիոն.

Այս համառոտ ահարկի մեջ պատմված է ուսական ամենապանծալի զորավարներից մեկի՝ Բագրատիոնի կյանքի և հերոսական զործունեության մասին:

Գիրքը նախատեսված է ղեկավարական դպրոցների կուրսանաների, կարմիր բանակայինների, ԲԳԿԻ-ի «հրամանատարական ու պետկազմի և սպազական պատմություն» հետաքրքրվող անձնավորությունների համար:



С. БОРИСОВ  
БАГРАТИОН

Арм. гиз ССР, Ереван, 1939 г.

2179  
39

— Արժի՛վ:

Այսպէս էլին անվանում գինւորները Բագրատիոնին:

Նա հեռավոր անցյալի այն սակավաթիւ զորավարներէց մեկն էր, վորին սիրում էր գինւորական մասսան: Այն դաժան ժամանակ— «Կարճքթանի չարագործ» Պապէյ Լի թագաւորութեան որով—գորավարները Փուխտէններով ու չպիցուտեններով <sup>1)</sup> էլին «նվիրվածութուն» մտցնում գինւորական մասսայի մեջ: Բագրատիոնը գեմոկրատ չէր. նա նույնիսկ չէր խորհրդածել գոյութիւն ունեցող կարգերի արատաւորութեան մասին, սակայն նա ճորտութեան կողմնակից չէր, սիրում էր ժողովրդին, վորի հետ բաժանում էր արշավանքների աղետներն ու վտանգները, և սիրում էր Ռուսաստանը: Յարական Ռուսաստանն այն ժամուհակ թալանչիական, հափշտակողական պատերազմներ էր մղում: Սակայն գինւորական մասսան, վորին ներչնչել էլին, թե նա այդ պատերազմներում իր հարազատ յերկիրն և պաշտպանում, չդիտեր այդ մասին. նա արիաբար կռւում էր ռազմի դաշտերում, պաշտպանելով իր յերկրի ամբողջականութիւնն ու անկախութիւնը. ուստի անհրաժեշտ էր պատերազմներում հանդես յեկաւ վորպէս ահարկու և անպարտելի մի ուժ: Ռուսական բանակի հզորութիւնը և ռազմական բարձր արվեստը ստեղծել էլին ուս գինւորները և այն ժամանակվա ականավոր գորավարները, վորոնց մեջ Բագրատիոնին պատկանում է առաջին տեղերից մեկը:

Պյոտր Իվանովիչ Բագրատիոնը ծագումով վրացի չէր:

<sup>1)</sup> Գերմաներէն այսպէս էլին կոչում այն ձողերը, վորոնցով ծեծում էլին գինւորներին:

Այդ յերևում եր նրա արտաքինից — նա միջհասակ, նի-  
հար, միանուս, թուխ տղամարդ եր, տիպիկ վրացական  
զեմքով: Ֆ. Գլինկան, վոր լավ եր ճանաչում նրան,  
պատմում ե. «Առանց հարցնելու, նրա զեմքին մի անգամ  
միայն հայացք գցելով, կարելի յեր իսկույն գլխի ընկնել,  
վոր նա ծագումով վրաստանի վորեւ շրջանից ե»: Հան-  
գիստ, սակափայտս, դուսպ, շարժումների մեջ արեւելյան վո-  
րոջ դանդաղակոտություն պարունակող Բագրատիոնը ան-  
դուսպ եր դայրութի ժամանակ և աննկուն ու կրքոտ թխա-  
միների նկատմամբ: Անվեհերությունն ու անուհաման խիզա-  
խությունը նրա բնավորության ամենից ավելի բնորոշ  
դժերն էին հանդիսանում:

Բագրատիոնը հարձակողական մարտի մեծ վարպետ եր:  
«Նա վողեչնչման րոպեներ եր ունենում, — պատմում ե նը-  
լաճատին մի ականատես: — Ճակատամարտի կրակն ինչ-վոր  
բան եր վառում նրա հոգու մեջ... նրա աչքերը փայլում  
էյին, նա հրամաններ եր տալիս և յսփունջին ուսերին,  
նազայիան ձեռքին, Գոնի մի հասարակ ձիու վրա սլանում  
էր նա, առաջ անցնելով դորասյուններից, վորպեսզի հրա-  
մանատար զենքայից դառնար հասարակ, առաջուր մար-  
տիկ...»:

Լինելով Սուվորովի ամենից ավելի բնդունակ աշա-  
կերաններից մեկը, Բագրատիոնը լավ եր հիշում նրա հե-  
տեվյալ պատվերները. «Ռազմական արվեստի իսկական կու-  
նոնն ե՝ ուղղակի հարձակվել հակառակորդի վրա, նրա հա-  
մար ամենից ավելի զգայուն կողմից, և վոչ թե հավաք-  
վել՝ յերկչոտությամբ անցնելով կողմնակի ճանապարհնե-  
րով, վորից բուն հարձակումը խիստ բարդ ե դառնում,  
այն ժամանակ, յերբ դորժը կարող ե վճովել միայն ուղ-  
ղակի, համարձակ հարձակմամբ»: Բագրատիոնն այդ բանի  
համար ոժտված եր անհրաժեշտ հատկություններով, յեր-  
կաթյա համառությամբ և տակտիկական աչքաշափով, վո-  
րոնք նա զարգացրել եր իր մեջ մարտի դաշտերում:

Բագրատիոնի անունը ժողովրդականացած եր ոուս Ժո-  
ղովրդի մեջ: Ռովինսկու հավաքած ոուսական ժողովրդ-

գական նկարների մեջ դտնվում են Սուվորովի և Բագրա-  
տիոնի նկարները ձիերի վրա, յերեսները դեմ առ դեմ:  
Նկարի տակ գրված ե.

Դեռ իմ սրբը սովորեցիր հանել թնդյուն,  
Դափնի էյիր հնձում վտաս ու վես.  
Հախուան ուժով դեպի փառքն էյիր ձգտում,  
Յեվ յես ինձ սրտակից ընտրեցի քեզ:

Այնուհետև բանաստեղծության մեջ Բագրատիոնը հրա-  
վիրվում ե Սուվորովի հաջորդը դառնալու:

Բագրատիոնի խիզախությունն առասպելական եր: Նա  
ձեռնարկում եր ամենափոսանդափոր դործողությունների  
և հաճախ իր խիզախությամբ ուղղում եր ուրիշների սխալ-  
ները: Այնտեղ, վորտեղ բացահայտ կորուստ եր սպանում,  
յերեսան եր զալիս այդ զարմանալի մարդը, և ոուս զին-  
վորները նրա զեկափարությամբ հրաշքներ էյին գործում:  
Բագրատիոնը շարունակ դտնվում եր մարտի ամենափոսան-  
դափոր վայրերում: Այդ բանը տեսնում և դնահատում  
էյին զինվորները և նրան այնպես էյին սիրում, ինչպես սի-  
րում էյին Սուվորովին ու կուսուղովին: Բագրատիոնի հը-  
րամանատարության տակ ծառայելը պատվափոր բան եր,  
սակայն նաև փոսնդափոր, — Բագրատիոնի աղյուսանո-  
սները մահվան դատապարտված մարդիկ էյին համարվում:

Նապոլեոնը, վորը յերկար տարիներ շարունակ Բագրա-  
տիոնի դեմ ուղարկում եր իր լավագույն մարչաներին,  
արժանի գնահատական ե ավել նրան.

— Բագրատիոնը — ոուսական բանակի լավագույն զենե-  
րալն ե:

Սակայն Բագրատիոնն ուներ մի թերություն, վորը  
խանդարեց նրան դառնալու այնպիսի կարգի դորաժար,  
ինչպիսին Սուվորովն ու կուսուղովն էյին: Նա ուղղական  
մեծ կրթություն չուներ: Նա ստրատեղ չեր: «Պատերազ-  
մի բարձրագույն նկատառումները լիակատար չափով մատ-  
չելի չէյին նրան», — գրում եր նրա մասին անցյալ դարի  
ուղղական պատմաբանը. բայց այդ նույն պատմաբանն

ընդունում էր, վոր Բագրատիոնը մարտի 'դաշտում «մի առյուծ էր, վորը չգիտեր վո՛չ վտանդ և վո՛չ յերկյուզ»:

Բագրատիոնին լավ ճանաչող գեներալ Յերմոլովն ասել է.

— Յեթե Բագրատիոնը կրթության նույն աստիճանն ունենար, ինչպիսին ուներ Բարկլայ դե-Տոլլին, այստե՛հ զիվ թե սույն վերջինը կարողանար համեմատվել նրա հետ:

Բագրատիոնի անձնական կյանքի մասին քիչ բան է հայտնի: Յեզ այդ դարմանալի չէ. նա ավելի հաճախ գտնվում էր բացօթյա խարույկի մոտ, քան հարկի տակ: Արշավանքների մեջ նա բոլորովին պահանջկոտ չէր: Բագրատիոնի քուներ կարճատև էր լինում, նա քնում էր ընդամենը յերեք, ամենաշատը՝ 4 ժամ: Պատերազմի, արշավանքի մեջ և տանը, պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Բագրատիոնը միատեսակ չափավոր և պարզ կյանք էր վարում: Նրան մոտիկից ճանաչողներն ասում էին, վոր նրան թե՛ գիչերը և թե՛ ցերեկը շարունակ կարելի չէր հագնված տեսնել:

Բագրատիոնը պատերազմում ավելի մեծ հաջողություններ ուներ, քան անձնական կյանքում:

Լինելով Սուլթորովի սերելին և Կուսուզովի բարեկամը, նա վոչ մի ընդհանուր բան չուներ չքամքի գեներալների և Ֆլեդել-ադյուտանտների այն ժամանակ տարածված տեսակի հետ, վորոնք օստրալիան կարչերան ձեռք ելին բերում պալատի պարկետի վրա:

Բագրատիոնի զինվորական ծառայությունն սկսվել է 1782 թվին: Բագրատիոնը 17 տարեկան էր, յերբ նրան ընդունեցին Կովկասում գտնվող մուսկետային զնդում՝ վորպես սերժանտ: Բայց շուտով, ընդհարումներից մեկի ժամանակ, Բագրատիոնը ծանր վիրավորվում է և թողնվում մարտի դաշտում: Նրան գտնում են լեռնականները՝ վիրավորներին և սպանվածների մեջ: Ճանաչում են նրան, ողնում, հետո ուղարկում են ուսանելի մոտ: Լեռնականներն այդ անում են վորպես յերախտագլտության նշան Բագրատիոնին հոր նկատմամբ:

Այդպես և սկսվել Բագրատիոնի մարտական կյանքը՝ Այդ կյանքը չափից դուրս բազմազան էր և անասելի ծանր: Բագրատիոնը մասնակցել է 20 արշավանքների և 150 ճակատամարտերի:

Խիզախի վառքով նա անցավ Ոչակովի պատերից, իտալիայի լեռներով ու Ալպերի դադաթներով մինչև Բորոգինոյի դաշտը, վորտեղ Փրանսիական նոնակը արյունոտ վերջակետ դրեց նրա կենսադրության մեջ:

Մեր համառոտ կենսագրական ակնարկում մենք կպատմենք Բագրատիոնի մարտական ուղու միմիայն հիմնական վուլերի մասին:

Նապոլեոնի զորքերի Յեվրոպա ներխուժելը ուսական զիվանագիտութեանը հարկադրեց լարված կերպով հետևել Ֆրանսիական նվաճողի զործողութուններին: Ֆարսիան կառավարութեանը յերկյուղ եր կրում, թե Լեհաստանը և թուրքիան ազրեսիվ յելույթներ կունենան, իսկ Նապոլեոնի «հեղափոխական» հռչակը սարսափ եր ազդում ուսական ազնվականութեան վրա: Պափել I-ը վորոչեց ուսական զորքերը դուրս բերել Նապոլեոնի դեմ: Պատերազմի պաշտոնական առիթը հանդիսացավ հետևյալ ձգտումը «հարկադրել Ֆրանսիային, վոր մտնի իր նախկին սահմանները և դրանով իսկ Յեվրոպայում վերականգնել հաստատուն խաղաղութուն ու քաղաքական հավասարակշռութուն»:

1799 թվականի կամպանիայի սկզբին Ֆրանսիացիները, չնայած թվով ավելի քիչ էլին, կարողացան զգալի չափով թափ տալ ավստրիացիներին՝ ցարական կառավարութեան այդ անհուսալի դաշնակիցներին:

Ռուսական զորքերը Սուվորովի հրամանատարութեամբ շարժվեցին Իտալիա, վորն այդ ժամանակ նվաճված եր Ֆրանսիացիների կողմից: Ռուսական զորքի առաջ խնդիր եր դրված՝ ազատագրել Իտալիան Ֆրանսիական զորքերից, վորոնք սպառնում էին Ավստրիային: Յեվ, թեև Պափել I-ի անհաջող ռեֆորմներն արդեն բավական վնասներ էլին պատճառել ուսական զինված ուժերին, բայց և այնպես ուսական բանակն իր մարտական պատրաստութեամբ չէր զիջում արեմտա-յեվրոպական լավազույն բանակներին: Իսկ ուս զինվորի բնածին բարձր հատկութունները, նրա տոկոսութունը, խիզախութունն ու զանազան պայմաններին հարմարվելու հմտութունը բանակի համար գերա-

զանցութուն էլին ստեղծում Արեմտյան Յեվրոպայի վարձկան զորքերի համեմատութեամբ: Բանակի գլուխն եր կանգնած նրա հանճարեղ ղեկավար Սուվորովը:

Իտալական արշավանքին մասնակցող ուսական բանակը ճամբար եր խփել Վերոնայում, յերբ այնտեղ ժամանեց Սուվորովը: Ավանդարդի հրամանատար Ռոզենբերգը Սուվորովին ներկայացրեց ուսական զինվորական պետերին:

Սուվորովը բոլորին բարևում եր, և նրանց, ում վոր չէր ճանաչում, հակիրճ ասում եր.

— Ձեմ լսել, կճանոթանանք:

Յերբ հերթը հասավ Բադրատիոնին, նա աշխուժորեն շուռ յեկավ դեպի նա.

— Իշխան Պյոտր,— բացականչեց նա:— Հիշում ես Ռչակովի մոտ, թուրքերի հետ: Լեհաստանում...

Յեվ Սուվորովը վրա ընկավ ու սկսեց համբուրել Բադրատիոնին:

— Հիշում ես մեր արշավանքները,— շարունակում եր նա իր հարցերը:

Նշանավոր զորավարի ուշադրութունից ուրախացած՝ Բադրատիոնը կարճ պատասխանեց.

— Հիշում եմ և յերբե՛ք չեմ մոռանա:

Ծանոթանալով իրեն ներկայացված զենեռայների հետ, Սուվորովը սկսեց բացատրել նրանց մարտի իր պատվիրանները: Հիմնականը արագութունն է և դրոհը, ամեն մի իրադրութեան մեջ կողմնորոշվել կարողանալը: Խփել թշնամուն, և վրչ թե վայրը գրաղեցնել: Չսպասել հետ մնացողին:

— Բնակիչներին չնեղել, զթութուն խնդրողին խրնայել,— ավարտեց նա իր խրատները:

Ռուսական ավանդարդի գնդերը հարձակման էլին պատրաստվում: Բոլորը զիտեյին, վոր Սուվորովի գալով՝ կսկսվեն տաք զործողութունները: Այդ հասկանում էլին բոլորը՝ գեներալից սկսած մինչև զինվորը:

Հաջորդ որը Բադրատիոնն առաջինը ղեկուցեց Սուվորովին, վոր իր գունդը պատրաստ է:

— Դու հասկացա՞ր ինձ, — հարցրեց նրան Սուվորովը: Դե՛, ուրեմն դե՛ս:

Վերոնայեց մեկնելուց առաջ ջոկատը Սուվորովից ստացավ հետևյալ ցուցմունքը.

— Հակառակորդի վրա դրո՛հել ամենուրեք:

Ավստրիական զենեքալները քմծիծաղ տվին և տարակուսանքով ուսերն ելին թոթվում.

— Մի՞թե դա տակտիկա չէ:

Բայց Բազրատիոնի համար Սուվորովի ցուցումը հասկանալի չէր և սրտին մոտ: Այդ նակազը մշտական նախաձեռնություն էր պահանջում իր զորքերից: Նա հակառակորդի վզին էր փաթաթում իր կամքը:

Շուտով Վերոնայի տոթակեղ փողոցներով, պազգորոչ կերպով խփելով յերթային քայլը, մեկը մյուսի հետևից ձգվեցին Բազրատիոնի վաշտերը: Դեպի վառ-կապույտ խալախան յերկինքը գալարապտույտ վերև բարձրացավ սուսական յերթային յերդը:

Ճանապարհին Բազրատիոնի 6-րդ յեզերյան դնդին միացան յերեք հավաքական զրենադերական զուժարտակներ, Դոնի կազակների յերկու զունդ և հրեամանին: Այդ ջոկատը յերկու և կես որվա ընթացքում անցավ 105 վերստ և յերթից ուղղակի մարտի մեջ մտավ Ֆրանսիացիների տվանդարդի հետ:

Բազրատիոնը գրոհով վերցրեց Բրեչիա քաղաքի միջնաբերդը և գրավեց Լեկկո քաղաքը: Վերջին կետի գրավման ժամանակ Բազրատիոնը վերավորվեց վոտքից, բայց շարքի մեջ մնաց:

Սուվորովն շտապում էր հանդիպելու հակառակորդի ղլխավոր ուժերին: Շողը, վատ ճանապարհները, մարդկանց հյուժված վիճակը, — վոչ մի բան չկարողացավ հետ պահել սուսական զորքերին այդ անդուզական յերթից: Ավստրիացիները, վորոնք սովոր ելին այն բանին, վոր իրենց շարունակ խփեյին, չեյին կարողանում հասնել սուսական բանակի հետևից:

Ավստրիական զենեքալները Սուվորովի հետևից զայրացած խոսում ելին.

— Ուելքը կորցրա՞՞ծ ձերուկ: Մի՞թե նա յերևակայում է, թե կարող է ջարդել Ֆրանսիացիներին: Այդպիսի հազթանակի համար վո՛չ մի դրավական չկա:

Ավստրիական բանակի հրամանատար զենեքալ Մելսար մոտ գնաց Սուվորովին.

— Անհաջողության դեպքում ո՞ւր նահանջե՞մ յես, — հարցրեց նա Սուվորովին:

— Տրերրիայի այն կողմը, Պիաչենցա, — ասաց Սուվորովը, ցույց տալով դեպի առաջ:

Ֆրանսիացիները մոտեցան Տիդոնա գետին: Ֆրանսիական հրամանատար Մակդոնալդը շտապեց կանխել Սուվորովին և նետվեց ավստրիացիների վրա, հույս ունենալով մինչև սուսների գայլ՝ վոտնատակ տալ նրանց: Ավստրիացիներն սկսեցին նահանջել:

Սուվորովին զեկուցում են.

— Մակդոնալդը Տիդոնայի հետևումն է:

Որը շող էր, քամի չկար: Վառողի ծուխը հեղձուցիչ ամպի նման կախ էր ընկած յերկրի վրա: Մարավը տանջում էր զորքերին: Ավստրիացիների զրուժյունը ժամ առ ժամ վատթարանում էր:

Սուվորովն իր մոտ կանչեց Բազրատիոնին.

— Գրոհի՛ր, — ցույց տվեց նա Տիդոնայի կողմը:

Միշտ առանց յերկար մտածելու կրակի մեջ նետվող Բազրատիոնն այս անգամ այդպիսի հրաման ստանալով տատանվեց: Նայելով զինվորների սևացած դեմքերին, վորոնք բաց բերաններով ելին շնչում, նա դիմեց Սուվորովին.

— Զորքերը սարսափելի հոգնած են: Լավ չի՞ լինի արդյոք մի փոքր հետաձգել գրոհը: Մեր վաշտերում քառասունական մարդ անգամ չկա:

Ֆելդմարշալը հոգնած, սակայն հաստատուն կերպով պատասխանեց.

— Գրոհի՛ր: Մակդոնալդն այդքան էլ չունի:

Մինչդեռ Ֆրանսիացիներն ունեյին 19 հազար, իսկ սուսները՝ միայն 14 հազար:

Գրոհն սկսվեց:

Ֆրանսիացիները զարմացած էյին մնացել իրենց մոտեցող ուսանական զորքերին տեսնելով:

Մակդոնալը, գիտենալով իր թվական դերազանցութեան մասին, համոզված կերպով իր զորամասերը նետում էր դեպի սվինային դրոհները: Բայց ուսանները բավայի նրման, արևի տակ շողշողացող, դուրս ցցված սվիններով նետվեցին նրանց դեմ հանդիման, և Ֆրանսիացիները հարկադրված յեղան հետ քաշվել:

Թշնամին հեռանում էր: Ռուսները շարունակում էյին իրենց առաջխաղացումը, չնայած անհարմար դիրքին, վտրի վրա անխուսափելիորեն արյունահեղ ճակատամարտ պետք է տեղի ունենար: Չորացած խոր առուները, վտակները թմբերը, ցանկապատերը, խաղողի այգիները, — այդ բոլորը չափից դուրս խանդարում էյին շարժումը:

Ավելի ու ավելի հաճախ էյին ընկնում արևահար յեղած գինւորները: Ավելի ու ավելի յեր դժվարանում առաջխաղացումը: Մակդոնալը Գոմբրովսկու լեհական գիվիլիային, վտրը գործում էր Ֆրանսիացիների հետ միասին, հրամայեց ընդունել ուսանների գրոհը: Բազրատիոնը գրոհեց լեհական գիվիլիայի վրա:

Բազրատիոնի «հրաշք-գյուցադունները» ալիքի նժան թափավեցին լեհերին դեմ հանդիման: Սկսվեց արյունահեղ մարտը, վտրի հետևանքով լեհերը նահանջեցին, շիկացած դետնի վրա թողնելով իրենց գինւորների զգալի մասը:

Սուվորովը, յերկյուղ կրելով, չլինի՞ թե շտեռնված շողը կործանի Բազրատիոնի ջոկատը, հրաման տվեց, վտր կանգ առնեն:

Արդեն յերեկո յեր: Մարտը դադարեց: Հսկառակորդներին անջատում էր Տրեբբիա գետը: Նրա յերկու ափերին խարույկներ վառվեցին: Մարդիկ հրճվում էյին զուլությունից, շիւա էյին յեփում իրենց համար և անվերջ ջուր էյին խմում, աշխատելով հատուցել իրենց մեկ որվար ծարավի համար: Մակայն հունիսյան գիշերը կարճ էլինում: Սուվորովյան նորից սկսվեց մարտը: Սուվորովը նորից հրամայեց Բազրատիոնին՝ գրոհել Ֆրանսիացիների վրա: Մակայն նրանք կանխեցին գրոհը և անսպասելի կերպով յեր-

կու դիվիզիաներով հարձակվեցին Բազրատիոնի վրա: Վերջնականապես չջախջախվելու համար անհրաժեշտ էր նահանջել:

«Տեղի ունեցավ իսկական սուվորովյան նահանջ: Ռուսական զորքերը, վտրոնք անձանութ էյին նահանջի ձեերին, պաշտպանում էյին հողի ամեն մի թիղը, հարձակման էյին անցնում, սվիններով առաջ էյին նետվում, թշնամուն հանդիպում էյին համարյա դիմահար կրակով: Գրենադերյան մի դունդ հսկառակորդի կողմից չըջապատված էր համարյա բոլոր կողմերից: Դեմքերը դարձնելով դեպի հարձակվողները՝ այդ դունդը հրաձուլությամբ պաշտպանվում էր միաժամանակ և՛ ճակատից, և՛ թիկունքից: Ֆրանսիացիները փոշինչ չէյին կարողանում անել նրանց հետ. դունդը ձեռք չէր ընկնում և ինքը փրկեց իրեն՝ չնորհիվ իր անվահերությանն ու սուվորովյան կոփվածքին: Մակայն հինգ դումարտակների մարտը տասնհինգի դեմ՝ չափից դուրս անհավասար էր...» (Պետրուչևսկի):

Բազրատիոնը, վտրը դժվար մարտեր շատ էր տեսել, զղաց, վտր ինքը չի դիմանա Մակդոնալի ճնշմանը:

«Իմ մարդկանց ուժերը, — պատմում էր նա հետագայում, — ծայր աստիճանի թուլացել էյին, նրանց թիվը բողբե առ բողբե նվազում էր անընդհատ կրակից: Ողի տաքությունը սարսափելի յեր: Յես մարտի մեջ մտցրի իմ գրենադերների վերջին պահեստը. հրացանները վատ էյին կրակում. նրանց փակադակներն ու պատվանդանները վասողից սեւացել էյին»:

Բազրատիոնն ուղևորվեց Սուվորովի մոտ՝ զեկուցելու իր ծանր գրության մասին:

— Ի՞նչ կա, Պյոտր: Ինչպե՞ս է:

— Վատ է... Ուժերը պակասել են...

Սուվորովը թուով ձիու վրա և Բազրատիոնի հետ միասին սրացավ դեպի մարտի վայրը: Ժամանելով այնտեղ և արագորեն կշռադատելով իրադրությունը, Ֆելդմարշալն ասաց.

— Կհարվածենք... Կքչենք...

Բազրատիոնը գրոհի տարավ իր զորամասերը: Ի պա-

տասխան այդ գրոհի՝ Մակղոնայրը հավաքեց իր վերջին  
ռեզերվը և մարտի մեջ մտցրեց այն: Ֆրանսիացիները  
թարմ զորքերը նեղում էին յերկար որերի մարտից տանջ-  
ված ռուսական նոսրացած զնդերին: Սակայն Սուվորովը՝  
իրեն հատուկ հաստատակամությամբ՝ նորից հրամայեց  
Բազրատիոնին՝

— Առա՛ջ:

Բազրատիոնը նորից գրոհի անցավ: Այդ ռուսական  
զինվորների ահեղ ճիգն եր: Յեվ Մակղոնայրը չդիմացավ:  
Ֆրանսիացիները հետ չպարտվեցին: Սակայն Սուվորովի հա-  
մար այդ քիչ եր: Նա հրամայեց հետապնդել հակառակոր-  
դին այնքան ժամանակ, «մինչև վոր վոչնչացվի»:

Վերավորված և բարոյապես ջանջախօլած Մակղոնայ-  
րը հրամանատարությունը զիջեց յերիտասարդ և ընդունակ  
ժուրերին: Ռուսական խորհրդում ժուրերը վորոշում է  
հարձակման անցնել:

Սուվորովը սպասում է, վոր ժուրերը դուրս գա  
հարթության վրա:

Ռզոստոսի սկզբներին Ֆրանսիացիներն արդեն Նովիի  
մոտ էին: Նրանք բռնել էին Ապենինյան լեռների ճյու-  
ղավորությունները՝ Սկրիվեցա և Ոբրա գետերի հովիտնե-  
րի միջև: Կտրոված վայրը և քաղաքը չըջապատող քարա-  
շեն պարիսպը Ֆրանսիացիների համար ստեղծել էին բոլոր  
հարձարությունները, վոր համառորեն պաշտպանեն քա-  
ղաքը:

Ժուրերը դանդաղում եր, հարթության վրա չեր դուրս  
գալիս:

Զորքերը յերկար չհանգստացան: Սուվորովը հրաման  
տվեց հակառակորդին հարվածելու լեռներում:

Հարձակումը սկսվեց ողոստոսի 4-ի լուսաբացին: Ա-  
ռաջին ընդհարումները տեղի ունեցան թևերում: Յեվ առա-  
ջին իսկ գրոհի ժամանակ ժուրերը սպանվեց:

Բազրատիոնը հրաման ստացավ Նովին դրավելու մա-  
սին: Սակայն Ֆրանսիացիները հետ մղեցին բոլոր գրոհ-  
ները: Այն ժամանակ Բազրատիոնը զորքերը տարավ ուղ-

ղակի Նովիի վրա, վորպեսզի ճակատային հարվածով  
վերցնի քաղաքը:

Առուններում ու խաղողի այգիներում դարան մտած  
Ֆրանսիացիներն արճճի հեղեղով դիմավորեցին ռուսներին:  
Բազրատիոնը միշտ առաջին շարքերում լինելով՝ վորդե-  
րում եր իր զինվորներին և նրանց տարավ մինչև քաղաքի  
պատերի տակ: Պարիսպն ամուր եր և չեր յենթարկվում իր  
վրա ուղղված ուժերի ազդեցությանը: Ֆրանսիական  
կարտեչը սուլում եր հարձակվողների դուռները վրայով:  
Բազրատիոնը Ֆրանսիացիների կրակի տակ կարգի բերեց  
ցրված զորքերը, և հրամայելով թմբուկ խփել՝ նոր գրո-  
հի տարավ նրանց: Ֆրանսիացիները դուրս յեկան քաղաքից  
և խփեցին դրոհողների ձախ թևին: Բազրատիոնի զորքե-  
րը, վորոնք փոքրաքանակ էին, սկսեցին հետ քաշվել:  
Հանկարծ, անսպասելի կերպով նրանց այդ նույն ձախ  
թևում հայտնվեց հակառակորդի թարմ, ռեզերվից յեկած  
զորասյունը: Ռուսները հարձակվեցին այդ զորասյունի վրա  
և հետ մղեցին նրա գրոհը: Սակայն այդ ժամանակ Բա-  
զրատիոնի աջ թևում հայտնվեց Գարդանի թշնամական  
բրիգադը...

Բազրատիոնի ջոկատի կորուստն անխուսափելի յեր  
թվում: Սակայն նա ոժանդակ ուժերի յեր սպասում և  
սառնասրտորեն շարունակում եր մարտը: «Ռուսական զոր-  
քերի դիժը, համալրված թարմ զորամասերով՝ կարգ ու  
կանոնով, ինչպես խաղաղ մանյովրների ժամանակ՝ թըմ-  
բուկի դարկով առաջ շարժվեց...» (Պետրուչեվսկի):

Բազրատիոնը սիրում եր կարգ ու կանոն պահպանել  
նույնիսկ ամենադաժան մարտի ժամանակ: Նա դիտեր, վոր  
գեղաշարորեն գրոհի դնացող զորքերն ավելի թունդ են  
կռվում: Բազրատիոնը սուվորովյան ճշտապահ աշակերտ եր  
և լավ եր ըմբռնել հանդիպական մարտի նրա արվեստը:  
Սակայն Բազրատիոնը հասկանում եր նաև մի այլ կանոն,  
վոր բղիտում եր սուվորովյան «հաղթանակելու դիտություն-  
նից», — հաղթանակը միմիայն ճակատային հարվածով չի  
ձեռք բերվում, պահանջվում է նաև մանյովրներ կատա-  
րել:

615  
39



Յեւ Բագրատիոնը շարունակում եր իր գրոհը Նովիի վրա, աշխատելով անցնել հակառակորդի թիկունքը:

Փրանսիացիները, վոր չպրտվել էյին դեպի Նովիի բարձունքները, ամրացան նրանց վրա: Նրանք գրոհի յենթարկվեցին ուսնների կողմից: Մեկը մյուսին հաջորդող յերեք գրոհներն ապարդյուն անցան, և Սուվորովը հրամայեց դադարեցնել գրոհները: Յերեք ժամից հետո մարտը վերսկսվեց և հաղթանակ բերեց ուսական զորքերին: «Նովիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը մինչև որս քիչ է ուսումնասիրված և միակողմանի յե լուսաբանված: Մինչդեռ այդ ուղղական արվեստի մի բարձր նմուշ է, Աուստերլիցից ավելի, նորագույն մարտերի նախատիպը՝ համարյա 100 տարով իր ժամանակից դեպի առաջ», — այսպես էյին արտահայտվում այդ մարտի մասին XIX դարի հետադա պատմաբանները:

Նովիի մոտ տեղի ունեցած ճակատամարտով էլ ավարտվեց իտալական կամպանիան: Նովիի մոտ ձեռք բերած հաղթանակի հետևանքները հսկայական յեղան: Իտալիան մաքրվեց Փրանսիական զորքերից: Սակայն ավստրիացիները, վախենալով ուսների հաղթանակից, վորոշեցին ուխտադրուժ կերպով ադատվել իրենց դաշնակիցներից:

Նրանց դիտավորութամբ՝ ուսական բանակն Իտալիայից պետք է անցներ Շվեյցարիա, վորտեղ այդ ժամանակ ուս-ավստրիական զորքերի դրուժյունը շատ սպառնալից էր:

III

Ռուսական զորքերն Իտալիայից հեռանալով և ուղեվորովելով դեպի հյուսիս՝ Շվեյցարիա, մոտեցան Ալպերի փեշերին:

Սուվորովը չգիտեր Ալպերով անցնելու պայմանները և վստահեց ավստրիացիների փորձառությանը: Շվեյցարիա դնալու համար յերեք ճանապարհ կար. նրանցից յերկուսը հեշտ էյին, իսկ յերրորդը՝ համարյա անմատչելի մի ուղի՝ անցնում եր Սեն-Գոթարգի վրայով: Բացի դրանից, այդ վերջին ուղին զանվում եր Փրանսիացիների հսկողության տակ: Ավստրիացիները Սուվորովին մատնանշեցին այդ ուղին: Նույն ուղին ջերմորեն հանձնարարում եր նրանց նաև վէյրտները—Ալեքսանդր I-ի ապագա ուղղական խորհրդատուն Աուստերլիցի ժամանակ: Ի լրումն այդ ամենի՝ ուսական զորքերին տրվել էյին վոչ ճիշտ «քարտեզներ» և անիրոճ ուղեկցողներ:

1799 թվի սեպտեմբերի 10-ին սկսվեց ուսական զորքերի պատմական յերթը Շվեյցարիայի վրայով:

Բագրատիոնը գնում եր ավանդարդում:

Ավանդարդային ջոկատն առաջնորդելու պայմանները լեռներում առանձնահատուկ դժվարություն էյին ներկայացնում: Բագրատիոնի ավանդարդը հարկադրված եր լինում շարունակ ճակատ առ ճակատ մարտեր մղել, ըստ վորում՝ հակառակորդն ամենևին էլ չեր ցանկանում ուսներին զիջել նախաձեռնությունը: Բագրատիոնը շարունակ հարկադրված եր լինում լուծել լեռներում ուսական բանակի համար ճանապարհ բաց անելու դժվարին խնդիրը. բնական ուժեղ խոչընդոտները տեղ-տեղ համարյա անհաղթահարելի էյին: Այդ խնդիրը հարկավոր եր լուծել բացառապես մար-

տիկները արիւթյամբ ու դիմացկունութեամբ, քանի վոր մանյովրներ կատարելու հնարավորութեաններ համարյա չկային: Յեւ մեծ եր ամբողջ աշխարհի զարմանքը, յերբ ուստական զինվորները՝ անծայրածիր Ռուսաստանի հարթավայրային տարածութեանները բնակիչներն իրենց կյանքում առաջին անգամ լեռները մեջ ընկնելով՝ ցույց տվին իրենց վոչ միայն համառութեանն ու դիմացկունութեանը, այլև հատուկ հնարամտութեանը լեռնային խոչընդոտները հաղթահարելու գործում, մի բան, վոր հատուկ է միայն լեռների բնակիչներին:

Չորքերն անցնում էին թե՛ դիշերը և թե՛ ցերեկը:

Անցումի յերրորդ որն է: Մառախուղը պատեց չորս կողմը: Առջևում, հինգ քայլի վրա վոչինչ չի յերևում: Անձրեւն ու ձյունը շարունակ հաջորդում են միմյանց: Ուժեղ քամին դետին և դլորում մարդկանց: Ձինվորները թրջվում ու սառչում են պաղ անձրևի տակ:

Բազրատիոնի հրամանը.

— Կանգնի՛ր: Յած ա՛ռ:

Ձինվորները մուսկետները վոտքի յեն առնում: Ճամբար են սարքում: Սարույկներ են վառում: Ինչ-վոր մեկը մի քարայր է գտնում, մտնում է նրա մեջ, սվինը խրում դեանին, վրան մոմ ամրացնում և առկայծող լույսի տակ սկսում է կարկատել իր սապոզը: Սարույկների մոտ շուտով յերգի ձայն է լսվում: Սոսքերը դղրդալի յեն հնչում ժայռոտ կիրճի մեջ: Հնչուն արձագանքը այդ խոսքերը տարածում է լեռների մեջ:

Մ'ի, ի՛նչ է դաշտի այս խոտիկը,

Լայնարձակ դաշտի թավ խոտիկը,

Չես ծաղկում, դու, խոտ, սոսկ խամրում ես...

Բազրատիոնն այդ ժամանակ մտածում եր իր մանկութեան մասին, հարազատ վրաստանի բարեհամբույր լեռների մասին: Այսերի վրա մուգ յերկինքը միաձուլվում է լեռների դադաթների հետ: Մթնում է: Լրարերը սուրճ է բերում: Բազրատիոնը խմում է այրող, սև, թանձր ըմպելիքը և ումպերի միջև խորը ներս է քաշում ծխամորճի

ծուխը: Գունը տանում է: Առանց հանվելու, հենվելով ժայռի մի կտորի, նա փաթաթվում է յափնջու մեջ և վայրկենապես քուն է մտնում:

Լուսաբացն առաջին անգամ զարթեցնում է Բազրատիոնին:

— Կարճատե նախաճաշ և յերթի՛, — հրաման է տալիս նա:

Վաշտերում լսվում է հրամանը.

— Ի գե՛ն:

Ձոկատը դուրս յեկավ: Ժայռերը, նեղ կածանները, վոր կպել էին անդունդների յեղերին, մեկ բարձրանում էին, — և այն ժամանակ զինվորները մաղցցում էին դեպի վեր, — մեկ զահավիժորեն ներքև էին իջնում, և այն ժամանակ զինվորները քարերի վրայով սահում էին դեպի ցած, հաճախ պոկվելով նրանցից և անդունդը դլորվելով:

Բազրատիոնն առջևից է գնում: Ձինվորները տաղնապով հետևում են, թե ինչպես է նա ընկնում վիրավոր վոտքի վրա: Բազրատիոնին յերբեք չեր հաջողվում իր վերքերը, ինչպես հարկն է, մինչև վերջ բուժել:

Առավոտյան նշանակված է Սեն-Գոթարդի գրոհումը, վորտեղ նստել էին ուսանների ուղին արգելափակող Ֆրանսիացիները: Գրոհի համար նշանակված զորքերը Սուվորովը բաժանեց յերեք զորասյունի: Աջ զորասյունը բազկացած եր Բազրատիոնի ավանդարդից: «Առավոտը ամպամած եր, մառախլապատ. անձրևը դադարել եր, սակայն խիտ ամպերը պատել էին սարերի կողերը: Դացիոյից առաջ շարժվելով՝ զինվորները, դիսպոզիցիայի համաձայն, գանազան կողմեր գնացին: Իշխան Բազրատիոնը աջ ուղղութեանը վերցրեց և սկսեց բարձրանալ գառիթափերի վրա... Ֆրանսիացիները, վարպետորեն ոգտագործելով ձորերը, ժայռերն ու քարերը, խորտակից կրակ բաց արին, և թեև ուստական առաջին յերկու զորասյուններն իրենց թեւանցիկ շարժումով նրանց հարկադրեցին նահանջի անցնել, սակայն նրանք բազմիցս դեռ կանգ էին առնում նպաստավոր դիրքերի վրա և հակահարված էին տալիս, նախքան լեռան գագաթը բարձրանալը...

Իսկ Բագրատիոնը դեռևս չէր յերևում թեվում: Նրա գործերը, վոր մազլցում էյին ապառաժներով ու վիհերով, առանց վորեւե կածանի, հոգնածությունից ու ժասպառ լինելով՝ շատ ուժ էյին կորցնում, բայց քիչ էյին առաջ դրնում: Լեռան դադաթը նրանց առաջ կարծես դնալով աճում էր և դնում էր դեպի հեռուն, կամ ամբողջովին ծածկվում էր ամպերով, վորոնք գործերին ընդդրկել էյին խիտ մառախուղի նման: Մարդիկ ոգնում էյին միմյանց, նստեցնում էյին մեկը մյուսին, հենվում էյին սվինների վրա, դանազան հնարքների էյին դիմում, սակայն գործը դարձյալ դժվար էր առաջ դնում, և անվերջ նրանց առաջ շարվում էյին այդ ահավոր, անհասանելի բարձունքները... Մինչդեռ որն արդեն յերեկո յեր դառնում» (Պետրուչևսկի):

Սուվորովը սկսեց անհանդստանալ Ռոզենբերգի ջոկատի վիճակի համար (այդ ջոկատն ամբողջ բանակի մեկ յերրորդական մասն էր), վորը թեանցման էր դնացել և գլխավոր հարվածը պետք է հասցներ: Սեն-Գոթարգի վրա դրոհելը հետաձգել չէր կարելի, և Ֆելդմարշալը հրաման սվեց: Հրացանային կրակոցների դրոգյունը թնդանութային կրակոցի յեր նմանվում: Ֆրանսիացիները, վորոնց թիկունքում բարձրանում էր ձյունափայլ դադաթով լեռը, իրենց անվրտանդ դրուժյան մեջ էյին համարում և շարունակ կրակի տակ էյին պահում ուսական գործերին: Սակայն անսպասելի կերպով ձյունափայլ դադաթի վրա մարդիկ յերևացին: Նրանք շտապում էյին դեպի ցած, և նրանցից առաջ գլորվում էյին վերևից պոկվող ձյան հյուսերը: Այդ—Բագրատիոնն էր իր ջոկատով: Հակառակորդը, շիթության մեջ ընկնելով, վոր իր թիկունքում ուսներ յերևացին, արագությամբ հեռացավ իր դիրքերից:

Սեն-Գոթարգը գրավված էր, և Ռոզենբերգը միմիայն դրանից հետո միացավ գլխավոր ուժերին:

Սատանի կամրջի մոտ տեղի ունեցած նշանավոր մարտից հետո ուսները, դրավելով Ալտորֆը, շարվեցին Ռոսչոոկյան լեռնաշղթայի վրայով: Յերթը սկսվեց սեպտեմբերի 16-ին: Սվանդարդում դարձյալ Բագրատիոնն էր դնում: Յերթի ժամանակ մի տաղնապալի լուր ստացվեց, թե Կոր-

սակովի կորպուսը և Գոտցեյի ջոկատը ջախջախվել են Մասսենայի կողմից, և Փրանսիացիները Գլարիսը գրավելով՝ գործերը քաշում են դեպի Շվից:

Ի լրումն այդ ամենի՝ սկսվեց քաղցը: Զորքերին կենսամթերքներ մատակարարելու հոգսը դրված էր ավստրիական կառավարության վրա, սակայն վերջինս չափից դուրս վատ էր մատակարարում ուսական գործերին: Հացը դանազան հացահատիկներից խոշոր աղացված ալյուրից էր թխված և կիսաթթու համ ուներ. փափուկ դրուժյան մեջ նա փշրվում էր և ձավար էր դառնում, իսկ չոր հացի մասին խոսելն անգամ ավելորդ էր: Այդ բոլորին ավելացրած նաև այն, վոր հացն առանց աղի յեր թխված և համ չուներ: Տավարի միսը ստացվում էր հիվանդ և ծեր անասուններից, իսկ հաճախ նաև ավանակի պինդ միս էյին տալիս: Զորքերը դժվար անցումներից և կիսաբաղց դրուժյունից ծայր աստիճան ուժասպառ էյին յեղել: Բագրատիոնը հարկադրված էր լինում հաճախակի դադարներ տալ իր ջոկատին: Այդ դադարներից մեկի ժամանակ նա թմբուկի վրա նստած՝ ծխամորճ էր ծխում: Նրան մոտեցավ շտաբի սպան և սկսեց պատմել, թե վորքա՞ն յերկերեսանի ու կեղծ են պահում իրենց ավստրիացիները: Նրանց մարշալը՝ Տուգուար բացահայտ կերպով դեպի կորուստ է տանում ուսական գործերին:

Բագրատիոնը չկարողացավ համբերել: Ծխամորճը սեղմելով բուռնցքի մեջ՝ նա վեր թռավ թմբուկի վրայից և սկսեց արագ-արագ դնալ ու գալ, մոռանալով վոտքի ցավը:

— Այդ սրիկայի պատճառով,— դայրացած հարձակվեց նա ավստրիական հրամանատարության վրա,— կորուստյան մատնել հազարավոր ուս ուղիներին: Բայց վո՛չ, Այդ յերբե՛ք չի լինի:

Շարժվեցին դեպի առաջ:  
Բագրատիոնն իր ջոկատով իջնում էր Մուսկենտալ հովիտը:  
Անցնում էյին ամպերի մեջ կորած, ձյունապատ լեռներով:

Հովիտը ներքևում մառախուղով եր ծածկված: Լեռ-  
ների լուսթյունը դավաճանական եր թվում և ճնշող աղ-  
գեցութուն ուներ:

Չուկատում ինչ-վոր մեկը սկսեց յերգել.

Լեռներո՛ւմ, լեռներո՛ւմ,

Բա՛րճը լեռներում,

Մնտառներո՛ւմ, անտառներո՛ւմ,

Մութ անտառներում—

Ձգվում եր փոքրիկ մի արահետ...

Սակայն յերգողի ձայնն անսպասելիորեն խլացավ  
դղրդղունից. զինվորների վտաքերի տակից սրկվեցին ձյան  
հյուսեր, և ճանապարհին վայր գցելով ժայռերի բեկուր-  
ները, ցած դուրվեցին: Իջնելը դժվար եր և վտանգավոր:  
Բայց ահա ձյունը վերջացավ: Վտաքերը սայթաքում էին  
թաց քարերի վրայով: Բարակ անձրև եր մաղում: Կածանի  
յերկու կողմերում բերանները բաց էին արել ձեղքվածք-  
ներն ու անդունդները: Ներքևում դրդալից աղմկում էին  
գետակները:

Անցումը տանջալից եր. բոլորի վտաքերի վրա զանա-  
զան սեղերում վերքեր էին գոյացել. նույնիսկ սպաները  
վտանաման չունեցին: Յերեկոյան, վերջապես, հովիտն  
ըջան և այնտեղ հանդիպեցին Փրանսիացիների առաջավոր  
պոստին: Բազրատիոնը հրամայեց շրջապատել նրանց և  
գերի վերցնել: Առաջավոր վաշտերի խիզախ գրոհով հրա-  
մանատարի աված խնդիրը կատարվեց:

Հետևյալ օրը Բազրատիոնին իր մոտ կանչեց Սուվո-  
րովը:

Ֆելդմարշալին նա գտավ սենյակի մի անկյունից  
մյուսն արագ քայլելիս: Նա ուշադրութուն չդարձրեց Բազ-  
րատիոնի գալու վրա և խոտորեն աղաղակում եր.

— Զորահանդեսնե՛ր... պահակատեսնե՛ր...

Բազրատիոնը մի կողմ եր կանգնած և սպասում եր,  
վոր ծերուկը հանգստանա, բայց նա ե՛լ ավելի յեր վրդով-  
վում.

— Բայց ջարդված լինել: Դժվար բան չե: Կորստյան

մատնել այդքան հաղարներ, և այն ել ինչպիսի՛: Յեվ մե՛կ  
որվա ընթացքում:

Յեկան մնացած ջոկատների պետերը:

Սուվորովը կանգ առավ և կարծես վերափոխվելով՝  
սպառնալի դիմեց հրամանատարներին.

— Կորսակովը ջախջախված է և Յյուրելիսի մյուս կող-  
մն է քշված: Գոտցեն անհետ կորել է, նրա կորպուսը  
ցրվել է: Այստրիական մյուս զորքերը, վորոնք գալիս էին  
մեզ հետ միանալու, հետ են շարավել ու հալածվել...

Սուվորովը պատմեց այստրիական հրամանատարու-  
թյան դավաճանության մասին, հրամանատարություն, վո-  
րի դուռին եր կանգնած բարոն Տուգուսը, վորը դիտավո-  
րյալ կերպով ուռուական բանակը գրկում եր արկերից ու  
կենսամթերքներից և անելանելի դրության մեջ եր թող-  
նում նրան լեռների մեջ:

— Այժմ մենք Ծվլցի վրա գնալու հնարավորություն  
չունենք: Մասսենան ավելի քան 60 հազար զինվոր ու-  
նի, իսկ մենք լրիվ 20 հազար ել չունենք: Հետ գնալն ա-  
մոթ է, այդ կնշանակեր նահանջել, իսկ մենք՝ ուռսներս  
յերբեք չենք նահանջում: Մենք շրջապատված ենք լեռնե-  
րով: Մեզ մոտ պաքսիմատ քիչ է մնացել, իսկ հրետանային  
արկեր ու հրացանի փամփուշտներ ավելի պակաս...

Սուվորովը խոսում եր արագ և ընդհատ-ընդհատ: Նա  
յերբեմն կանգ եր առնում, վոր շունչ առնի, բայց ամբողջ  
ճառի ընթացքում նրա աչքերը շարունակ կրակի պես փայ-  
լում էին: Պետերը լսում էին՝ հոնքերը կիտած: Բազրա-  
տիոնը կանգնած եր ուղիղ. նա անթարթ նայում եր Սու-  
վորովին:

— Մենք շրջապատվելու յենք ուժեղ թշնամու կող-  
մից, — շարունակեց Սուվորովը, — թշնամու, վորը հպար-  
տացել է նենդամիտ դավաճանությամբ ձեռք բերված հաղ-  
թանակով... Ոգնություն մենք վոչ վորքից չենք կարող  
սպասել...

Պետերը լուռ էին:

Յեվ յեղրափակման մեջ Սուվորովը մատնանչեց, թե  
մնացել է միայն մի հույս.

— Մեր առաջ կանգնած են չարագանց մեծ, աշխարհում չտեսնված դժվարութիւններ, սակայն յես հուշուունեմ զորքերի մեծագուշն խիզախության և մեծագուշն անճնադոհության վրա:

Սուվորովը չհարցրեց պետերի կարծիքը: Դրութիւնը պարզ էր նկարագրված: Յեւ յեւրք միայն մեկն էր— առաջ գնալ: Սուվորովն սկսեց թելադրել դիսպոզիցիան:

Բազրատիոնը հասկանում էր, վոր այլ բան է մարտի մեջ հաղթվելը թվով կամ քաջությամբ դերագանցող հա- կառակորդի կողմից, սակայն ընկնել վորպես յերկչոտ դավաճանության զոհ, յերբե'ք:

Դիսպոզիցիայի համաճայն, զորքերը դուրս յեկան սեպտեմբերի 18-ին:

Սուվորովի բանակում դեռ մնացել էին ավստրիական վոչ մեծ զորամասեր: Վիեննան չէր համարձակվում բացա- հայտ կերպով իր կապերը խղել իր դաշնակցից: Ռուսաս- տանի հետ դժտվելը վտանգավոր էր, մանավանդ վոր ուու- սական բանակը նրանց քթի տակ էր և փոքր ուժ չէր հանդիսանում:

Ավստրիական մի զորամաս՝ Աուֆենբերգի հրամանա- տարությամբ, վոր շարժվում էր ուուսների հետ միասին, Բրեդել սարից վայր գլորեց հակառակորդի պոստերը և հասավ մինչև Կրենտալ, վորտեղ գիշերելու համար կանգ առավ լճի մոտ: Մոլիտարի Փրանսիական ջոկատը գրոհեց ավստրիացիների վրա և առաջարկեց նրանց անճնատուր լինել: Աուֆենբերգը բանակցութիւններ սկսեց հանճնվե- լու մասին: Սակայն ինչպես միշտ, անսպասելի կերպով այնտեղ հայտնվեց Բազրատիոնը: Նա զորքերն անցկացրեց ճահճի միջով, մատղաշ անտառով, և անցնելով լեու- ների վրայով, հանկարծակի յերևաց Փրանսիական ջոկա- տի ճախ թևում: Ռուսներն «ուուա» գոչելով սվինամարտի նետվեցին: Փրանսիացիները նահանջեցին: Բազրատիոնը հետապնդում էր Փրանսիացիներին: Նրանք գնում էին մի նեղ կածանով, վորով դժվարությամբ միայն յերկու մարդ կարող էր անցնել: Ճանապարհը հաճախակի փակ- վում էր ժայռերի բեկորներով և փոթորկից տապալված

ծառերով: Գիշերվա վրա հասնելը դադարեցրեց հետապնե- դումը:

Ռուսները գնում էին Գլարիս: Վորոշված էր այնտեղ հանգստանալ և մի քիչ կերակրվել: Նախորդ որը բաժան- վել էր վերջին պաքսիմատը:

Սակայն Գլարիսի ճանապարհը բռնել էր Մոլիտարի Փրանսիական ջոկատը: Համառ գրոհներից հետո Բազրատի- ոնը Մոլիտարին դուրս վանեց Գլարիսի ճանապարհին գտնը- վող գյուղից, խլեց նրանց թնդանոթը, դրոշը և 300 գերի վերցրեց: Մոլիտարը նահանջեց դեպի Նեֆելս. այնտեղ նա նպաստավոր գերք գրավեց, վորի վրա Բազրատիոնը յերկար ժամանակ և համառորեն գրոհում էր: Սակայն ուուսների համառութիւնը հաղթանակեց: Բազրատիոնը գրավեց Նե- ֆելս և Մոլիս գյուղերը: Դարձյալ ուղղմական ավար վերցվեց— յերկու թնդանոթ, դրոշը և հարյուր գերի:

Հինգ որ շարունակվեցին Գլարիսի մատուցների մոտ տեղի ունեցող մարտերը:

«Գլարիս քաղաքի առաջ,— պատմում է այդ արշավան- քի մասնակիցը,— հակառակորդը վերջին ջանքը գործա- դրեց. նա գրավեց կիրճի առաջ գտնվող վայրը: Մի կող- մից լեռների ամենաբարձր, անանցանելի կատարներն էին, մյուս կողմից՝ լիճն ու ճահճուտը. մեջտեղում մի նեղլիկ ճանապարհ էր, վորը լճի մոտ համարյա կտրվում էր լե- ոան սուր ու թեք մի անկյունով»:

Ավստրիացիների տված քարտեզները սխալ դուրս յե- կան, և դեպի Գլարիս նրանք յենթադրութիւններ անելով էին գնում: Սպաները դոտան մի շվեցարացի ուղեցույց և նրան բերին Բազրատիոնի մոտ:

Յույց տալով լեռների մեջ գտնվող մոռայ խորխորա- տը՝ Բազրատիոնը հարցրեց ուղեցույցին.

— Կարելի՞ յե այս կիրճից դուրս դալ դեպի Գլարիս: Ուղեցույցը պատասխանեց.

— Ձախ կողմում գտնվող ժայռերից մեծ դժվարու- թյամբ կարելի յե դուրս դալ. աջից կարելի յե նաև լիճը շրջանցել, բայց այդ ճանապարհը յերկար է և շատ դժ- վար— ճահճուտ է: Ինկ այժմ ցուրտ է...

Բազրատիոնը վորոշեց փորձել այդ յերկու ճանապարհները— Ժայռերի միջով և ճահճուտի միջով—և մեկական գումարտակ ուղարկեց նրանցից ամեն մեկով:

Գումարտակներն անցան և դուրս յեկան Փրանսիացիների թիկունքը:

Բազրատիոնը կատարեց Սուվորովի հրամանը Գլարիս դուրս գալու մասին: Սակայն նրա ջոկատը Գլարիսում դրտավ միայն մի քիչ պաքսիմատ և մարդուն մեկական Փունտ պանիր:

Այն հուլիսերը, վոր դրել եր Սուվորովը Գլարիսի վրա, ապարդշուն անցան: Այլստրիացիներից ոգնութուն չեկավ:

Կորսակովի պարտութունից, ինչպես նաև այն բանից հետո, յերբ ավստրիական զորքերը թողին իրենց դաշնակիցներին, սուվորովյան փոքրիկ բանակի դրութունն անհուսալի յեր թվում. հարավ-արևմուտքից իր ամբողջ մասսայով նրա վրա յեր շարժվում Մասսենան, աշխատելով փակել և ճզմել նրան ձորերում:

Վերջապահ գործասը նման դեպքերում բացառիկ նըշանակութուն է ստանում. վերջապահն իր վրա պետք է վերցնի հակառակորդի կատաղի հարվածների ամբողջ ծանրութունը, վորպեսզի, թույլ չտալով վոր իրեն ջախջախեն, բանակը փրկի:

Սառնասիրտ արիութուն և անհողողղ վճռականութուն էր հարկավոր, վորպեսզի նրանք իրենց սվիններով քողարկեյին դեպի հյուսիս գնացող բանակը:

Սուվորովը, վոր շատ լավ էր ճանաչում իր գեներալների մարտական հատկութունները, միայն Բազրատիոնին կարող էր հանձնարարել վերջապահ գործասի հրամանատարութունը, վորից կախված էր նրա բանակի վիճակը: Միմիայն նա յեր իր մեջ միացնում պահանջվող անվեհերութունն ու համառութունը, միմիայն նրան էյին անսահմանորեն վստահում զինվորները, վորոնք նրա ղեկավարությամբ պատրաստ էյին կատարելու ամեն մի սխրագործութուն:

Արշավը սկսվեց սեպտեմբերի 23-ի՝ լույս 24-ի դիչերը: Վերջապահ շարքերում գնում էր Բազրատիոնի ջոկատը:

տը: Հետևյալ որն իսկ նա առիթ ունեցավ մարտ ընդունելու դարան մտած թշնամուց:

Փրանսիական 5000 զինվորներ հարձակվեցին Բազրատիոնի ջոկատի 2000 զինվորների վրա: Յերկար շարունակվեց այդ անհավասար մարտը, մինչև վոր սուվորովյան բանակը հեռացավ լեռներից: Իրենք՝ Փրանսիացիները հետո խոստովանում էյին, թե «ոուաները կովում էյին կատաղի կերպով, և կրակելով բոլոր փամփուշտները, սվիններով հետ մղեցին հակառակորդին...»

Շվեցարական արշավանքը վերջացավ:

Բազրատիոնը գնաց Պետերբուրգ: Այնտեղ նրան դիմավորեցին փառքը, ընկերները: Սակայն Պետերբուրգի բարձր հասարակութունը չեր գրավում խստակյաց զինվորին, վորն իրեն ավելի լավ էր զգում արշավանքի մեջ, մարտի վտանգների մեջ, քան չքեղ հյուրասենյակների փայլեցրած պարկետների վրա:

Բազրատիոնը շուտով թողնում է Պետերբուրգը և նորից բանակ մեկնում:

Նապոլեոնի դեմ կատարված 1805-1807 թվականների արշավանքների ժամանակ մենք Բաղրատիոնին նորից տեսնում ենք բանակում, ամենավտանգավոր ճակատամասերում, վորտեղ նա անսխալ կերպով հրամանատարութիւն է անում մերթ ավանդարդում, մերթ վերջապահ զորամասերում, նայած նրան, թե բանակը հարձակվո՞ւմ է, թե հեռաջվում: Բաղրատիոնը կամ առաջինն էր հարվածներ հասցնում, կամ առաջինն էր ընդունում հակառակորդի հարվածները: Յեւ մենք նորից տեսնում ենք նույն համառութիւնը նշված նպատակին հասնելու դուժում, բաղրատիոնյան նույն խիզախութիւնը, վորպիսին մենք նկատեցինք նրա մեջ իտալական և չվեցարական արշավանքների ժամանակ:

1805 թվականի աշունն էր գալիս: Ավստրիայում, վորտեղ այդ ժամանակ մարտական գործողութիւններ էին կատարվում, այդ տարվա աշունն անձրևային էր: Ռուսական բանակը՝ Կուտուզովի հրամանատարութեամբ Կրեմսի տակ տեղի ունեցած մարտից հետո՝ Նապոլեոնի՝ թվով գերազանցող զորքերից հեռանում էր դեպի Բրաունաու:

Նապոլեոնը, վորին չհաջողվեց ռուսական բանակը վճռեցնել Կրեմսի մոտ, Կուտուզովի ջախջախման նոր պլան մշակեց: Նրա հրամանով՝ Մյուրատի հեծելազորը, Սուլտի և Լաննի կորպուսները և Ուզինոյի զրենազերները պետք է գրավէին Վիեննան, և ուղեորվէին դեպի Յնայմ, կտրէին Կուտուզովի նահանջի ուղին:

Կուտուզովը, գուշակելով Նապոլեոնի մտադրութիւնը, բանակին հրամայեց անմիջապէս նահանջել Կրեմսից: Տհաշար զինվոր զննելով Բաղրատիոնի հրամանատարութեան

տակ, նա խնդիր տվեց նրան—ինչ զնով էլ լինի՝ հետ պահել Փրանսիական զորքերի ամբողջ մասսան:

Կուտուզովը չէր թագնում Բաղրատիոնից, վոր նա ատիպված կլինի զոհել ամբողջ ջոկատը՝ մինչև վերջին զինվորը: Իրեն՝ Բաղրատիոնին Կուտուզովը հրաժեշտ տվեց—վորպէս մահվան մատնված մի մարդու:

— Կղիմանամ: Չեմ հանձնի,— յեղավ Բաղրատիոնի պատասխանը:

Բաղրատիոնը և նրա ջոկատի յուրաքանչյուր զինվորը հասկանում էին, վոր իրենց արիութիւնից և անձնվիրութեան պատրաստակամութիւնից է կախված ամբողջ բանակի բախտը: Փոխադարձ ոգնութեան բարձր զգացումը, վոր այնպէս հիանալի կերպով զարգացած էր ռուս զինվորի մեջ, ավելորդ էր դարձնում բոլոր այն պաթետիկ հրամանները, վորոնցով Նապոլեոնը սիրում էր ջերմացնել իր զորքերի վրդին:

Ռուսական զորքերը զնում էին հեղեղված ճանապարհներով: Մյուրատի հեծելազորը և Ուզինոյի զրենազերները կրնկակոխ հետապնդում էին Բաղրատիոնին: Դժվարութեամբ հասան մինչև Գոլլաբրուն: Դիրքն անհարմար համարվեց պաշտպանութեան համար: Նահանջեցին Շենդաբենի մյուս կողմը և դետակն անցան: Բաղրատիոնի ջոկատի մեջ էին կոմս Նոստիցի ավստրիական զորքերը, վորոնք կազմում էին բաղրատիոնյան զորքերի ավանգարդը:

Բաղրատիոնը ռազմական խորհուրդ հրավիրեց:

Այդ ժամանակ (1805 թվի նոյեմբերի 3-ին) Մյուրատը, իմանալով, վոր իր առաջ գտնվում են Նոստիցի հուշարները, նրա մոտ ուղարկեց իր սպային, հաղորդելով, վոր Փրանսիայի և Ավստրիայի միջև սեպարատ հաշտութիւն է կնքված, ի նշան վորի՝ ավստրիացիներն անարգել կերպով Փրանսիացիներին թույլ տվին, վոր Դանուբի վրայով անցնեն Վիեննա:

Այդ բոլորը կեղծիք էր. Մյուրատը պարզապէս Վիեննայի առիկ հիմարացրեց ավստրիացիներին և նրանց թթի

IV

Նապոլեոնի դեմ կատարված 1805-1807 թվականների արշավանքների ժամանակ մենք Բաղրատիոնին նորից տեսնում ենք բանակում, ամենավտանգավոր ճակատամասերում, վորտեղ նա անվիփոխ կերպով հրամանատարություն է անում մերթ ավանդարդում, մերթ վերջապահ զորամասերում, նայած նրան, թե բանակը հարձակվո՞ւմ է, թե հեռաջվում: Բաղրատիոնը կամ առաջինն եր հարվածներ հասցնում, կամ առաջինն եր ընդունում հակառակորդի հարվածները: Յեւ մենք նորից տեսնում ենք նույն համառությունը նշված նպատակին հասնելու դուժում, բաղրատիոնյան նույն խիզախությունը, վորպիսին մենք նկատեցինք նրա մեջ խտալական և չվեցարական արշավանքների ժամանակ:

1805 թվականի աշունն եր դալիս: Ավստրիայում, վորտեղ այդ ժամանակ մարտական գործողություններ եյին կատարվում, այդ տարվա աշունն անձրևային եր: Ռուսական բանակը՝ Կուտուզովի հրամանատարությամբ Կրեմսի տակ տեղի ունեցած մարտից հետո՝ Նապոլեոնի՝ թվով գերազանցող զորքերից հեռանում եր դեպի Բրաունաու:

Նապոլեոնը, վորին չհաջողվեց ուսաական բանակը վոչնչացնել Կրեմսի մոտ, Կուտուզովի ջախջախման նոր պլան մշակեց: Նրա հրամանով՝ Մյուրատի հեծելազորը, Սուլտի և Լաննի կորպուսները և Ուզինոյի դրենագերները պետք է գրավեյին Վիեննան, և ուղևորվեյին դեպի Յնայմ, կտրեյին Կուտուզովի նահանջի ուղին:

Կուտուզովը, գուշակելով Նապոլեոնի մտադրությունը, բանակին հրամայեց անմիջապես նահանջել Կրեմսից: Ցհազար զինվոր դնելով Բաղրատիոնի հրամանատարության

տակ, նա խնդիր տվեց նրան—ինչ գնով ել լինի՝ հեռ պահել Փրանսիական զորքերի ամբողջ մասսան:

Կուտուզովը չեր թագնում Բաղրատիոնից, վոր նա ասիաված կլինի զոհեւ ամբողջ ջոկատը՝ մինչև վերջին զինվորը: Իրեն՝ Բաղրատիոնին Կուտուզովը հրաժեշտ տվեց—վորպես մահվան մատնված մի մարդու:

— Կղիմանամ: Չեմ հանձնի,— յեղավ Բաղրատիոնի պատասխանը:

Բաղրատիոնը և նրա ջոկատի յուրաքանչյուր զինվորը հասկանում եյին, վոր իրենց արիությունից և անձնվիրության պատրաստակամությունից է կախված ամբողջ բանակի բախտը: Փոխադարձ ոգնության բարձր զգացումը, վոր այնպես հիանալի կերպով զարգացած եր ուս զինվորի մեջ, ավելորդ եր դարձնում բոլոր այն պաթետիկ հրամանները, վորոնցով Նապոլեոնը սիրում եր ջերմացնել իր զորքերի վոգին:

Ռուսական զորքերը գնում եյին հեղեղված ճանապարհներով: Մյուրատի հեծելազորը և Ուզինոյի դրենագերները կրնկալիս հետապնդում եյին Բաղրատիոնին: Դժվարությամբ հասան մինչև Գոլլաբրուն: Դիրքն անհարմար համարվեց պաշտպանության համար: Նահանջեցին Շենդրաբենի մյուս կողմը և գետակն անցան: Բաղրատիոնի ջոկատի մեջ եյին կոմս Նոստիցի ավստրիական զորքերը, վորոնք կազմում եյին բաղրատիոնյան զորքերի ավանգարդը:

Բաղրատիոնը ռազմական խորհուրդ հրավիրեց:

Այդ ժամանակ (1805 թվի նոյեմբերի 3-ին) Մյուրատը, իմանալով, վոր իր առաջ գտնվում են Նոստիցի հուսարները, նրա մոտ ուղարկեց իր սպային, հաղորդելով, վոր Ֆրանսիայի և Ավստրիայի միջև սեպարատ հաշտություն է կնքված, ի նշան վորի՝ ավստրիացիներն անարգել կերպով Փրանսիացիներին թույլ տվին, վոր Դանուբի վրայով անցնեն Վիեննա:

Այդ բոլորը կեղծիք եր. Մյուրատը պարզապես Վիեննայի տակ հիմարացրեց ավստրիացիներին և նրանց ջթի

տակ դրամից կամուրջը՝ զորքերն անցկացնելով Դանուբի վրայով:

Նոստիցը, վորը չէր պատկանում վոչ խելոք, վոչ եր քաջարի հրամանատարների թվին, հավատաց Մյուլ-րատին և Բազրատիոնին զեկույց ուղարկեց այն մասին, թե ինքը հրաժարվում է հետագայում արչավանքին մասնակցելուց, նկատի ունենալով, վոր հաշտություն է կընքված Ավստրիայի և Ֆրանսիայի միջև:

Բազրատիոնն այդ զեկույցը ստացավ ռազմական խորհրդի ժամանակ Ավստրիացիների հերթական դավաճանությունը համբերությունից հանեց նրան: Նա դուրս թռավ սենյակից և ձի պահանջեց: Բազրատիոնը սլացավ Նոստիցի մոտ և սկսեց համոզել նրան.

— Կոմս, այդ ճիշտ չէ, անհնարին է: Այդ—ռազմական խորամանկությունն է:

Նոստիցը, վորը չէր ուզում կովել, բթամտորեն պատասխանեց.

— Մենք հաշտություն ենք կնքել, և յես այլևս չեմ կարող պատերազմել:

Տեսնելով, վոր ապարդյուն է վորևէ բանում համոզել այդ ապուշին ու վախկոտին, Բազրատիոնն իր զորքերին հրամայեց մարտի պատրաստվել:

Այնինչ Մյուլրատը, լսելով ավստրիացիների հեռանալու մասին, մոտենում էր Շենդրաբենին: Բազրատիոնն իր յեղերներին հրամայեց հեռանալ Շենդրաբենից: Ֆրանսիացիները, Շենդրաբենը գրավելուց հետո, սկսեցին հետապնդել ռուսներին: Բազրատիոնը վորոշեց ընդունել մարտը, վորպեսզի Ֆրանսիացիներին հետ պահի և Կուտուզովին հնարավորություն տա առաջ դնալու:

Բազրատիոնի ջոկատի դրությունը իրեն հետապնդող Ֆրանսիական զորքերի առաջ այնքան ծանր էր, վոր Կուտուզովը զեկուցեց էր. «Իշխան Բազրատիոնի ջոկատի վոչընչանալն անխուսափելի յէր, ինչպես և հավասարապես՝ իր բանակի ջախջախումը, վորովհետև ավանպոստերի մոտ լինելը հնարավորություն չէր տալիս արագ նահանջ կատարելու, իսկ զինվորների հյուծված լինելը արագաց-

րած յերթերից ու բացթեւաններից՝ նրանց անընդունակ դարձրեց դիմանալու նույնիսկ կովի մեջ»:

Մյուլրատը բուրբովին մոտենալով Բազրատիոնին և հետախուզութեան միջոցով իջանալով, վոր Կուտուզովը մոտիկ է դտնվում, վորոշեց նահանջող Կուտուզովի ճանապարհը կտրելու համար ուղարկել Բերնարդոտի և Մորտյեյի կորպուսները, իսկ Բազրատիոնի հետ նույն խաղը խաղալ, ինչ—վոր Նոստիցի հետ: Սակայն Բազրատիոնին խորամանկութեամբ խաբելն ավելի դժվար դուրս յեկավ, քան Նոստիցին: Բազրատիոնը Ֆրանսիական պարլամենտյորին ուղարկեց Կուտուզովի մոտ, վորը ձգձգեց բանակցությունները՝ ժամանակ շահելու համար:

Այդ մասին լսանալով՝ Նապոլեոնը կատաղեց և խիստ հանդիմանելով Մյուլրատին («մի՞թե կարելի յէ բանակցությունների մեջ մտնել այդ հյուսիսային ծեր աղվեսի հետ»—ասում էր նա Կուտուզովի մասին), հրամայեց դրոհել ռուսների վրա:

Մյուլրատը Բազրատիոնի մոտ մի սպա ուղարկեց, հաղորդելու, վոր զինազառը վերջացած է: Դրանից անմիջապես հետո սկսվեց ռուսական զորամասերի հրետանային զնդակոծությունը:

Մարտը սկսվեց նոյեմբերի 4—ին, ցերեկվա ժամը 5—ին: Հակառակորդների ուժերը չափից դուրս անհավասար էին:

Բազրատիոնն ուներ 8 հազար՝ իր վրա հարձակվող 40 հազար Ֆրանսիացիների դիմաց: Բազրատիոնն իր ջոկատը շարեց մարտական կարգով, Շենդրաբեն դյուղից դեպի հյուսիս: Ուղինոյի Ֆրանսիական զրենադերները, վորոնք շարված էին յերկու զորասյունով, սկսեցին հարձակում գործել բազրատիոնյան մարտական կարգի կենտրոնի վրա, — Մյուլընյի դիվիզիան աջ թևի դեմ, և Լեզրանի դիվիզիան՝ ձախի դեմ: Վանդամի դիվիզիան պահեստում էր գտնվում: Ֆրանսիացիների շարժմանը խոչընդոտելու համար ռուսական հրետանավորները նուսահներով հրկիզեցին Շենդրաբենը: Ֆրանսիական հեծելազորը նետվեց ռուսների կենտրոնի և թևերի վրա: Հետևաին անցավ նրանց թիկունքը: Հակառակորդը «փոթորկաբեր ամպերի նման շրջապա-

աել եր մեզ բոլոր կողմերից», — վերհիշում էյին հետո սահանատեսները: Բազրատիոնը կարգը սլաշտպանում եր և յերևում եր մերթ մեկ, մերթ մի ուրիշ գնդի մեջ, վորոնք հարկադրված էյին լինում կրծքով ճանապարհ հարթել իրենց համար, վորպեսզի դուրս գան շրջապատումից:

Նա իր ձեռքից բաց չեր թողնում մարտի ղեկավարութունը: Վրա հասած մթությունը և հրետանու դղրդյունը խլացնում էյին հրամանատարության խոսքերը, և մարտի վիճակը գտնվում եր իրենց խակ՝ զինվորների ձեռքին, վորոնք կռվում էյին հազվագյուտ արիությամբ, դիտանալով, վոր իրենք փրկում են ուսական բանակը:

Ռուսական զորքերի արիությունը հաղթանակեց: Բազրատիոնը դուրս յեկավ մահացու ընդգրկումից և հակառակորդի շրջապատումից դուրս բերեց իր զորքերը: Մարտի դաշտը յեկավ ինքը՝ Նապոլեոնը: Տեսնելով, վոր Փրանսիացիների հետադա ջանքերն ապարդյուն են, նա հրամայեց զազարեցնել մարտը: Բազրատիոնը հեռանում եր, իր հետ ամենլով գերի վերցրած Փրանսիացիներին՝ մի գնդապետ, յերկու սպա, 50 զինվոր և դրոշը:

Այն ժամանակ, յերբ Բազրատիոնը հետ եր պահում Փրանսիացիների ճնշումը, Կուստուզովի իր բանակը տանում եր հեռուն, դեպի արևելք: Առանց հանդատանալու, հեղեղված ճանապարհով, մինչև ծնկները ցեխի մեջ խրվելով՝ այդ բանակը հասավ Պրոգորլից: Այստեղ, Բազրատիոնի քողարկման շնորհիվ՝ նա հնարավորութուն ստացավ հանդատանալու և կարգի բերելու իրեն: Նոյեմբերի 6-ին Բազրատիոնն իր ջոկատի մնացորդները բերեց Պրոգորլից, վորտեղ գտնվում եր Կուստուզովի բանակը: Ֆելդմարշալը զրկեց Բազրատիոնին և սասց:

— Դու կենդանի յես — այդ ինձ համար բավական է:

Ռուսների հետագա հետ քաջվելու ժամանակ Բազրատիոնը նորից վերջապահ մասումն եր գտնվում, քողարկելով Կուստուզովի նահանջը:

Բանակը մոտեցավ Աուստերլիցին: Այստեղ, Ալեքսանդրը Ի-ի հանցանքով ուսական զորքերը պարտություն կրեցին Նապոլեոնից: Կուստուզովը հակառակ եր այդտեղ մարտ

մղելուն, սակայն նրան հարկադրեց այդ անելու Ալեքսանդրը: Կուստուզովի կասկածներին համամիտ եր նաև Բազրատիոնը:

Յերբ նրան ուղարկեցին ավստրիացի վեյրտերի կազմած խճճված, վոչ պարզ դիսպոզիցիան, Բազրատիոնն աւաց:

— Մենք տանու՛ւլ կտանք ճակատամարտը:

Յեվ այդպես ել յեղավ: Յերբ Լաննը սկսեց անցնել ուսաների ձախ թևը, Բազրատիոնը, չուզենալով ավելորդ զոհեր տալ, հանդիսա կերպով իր զորքերը հետ քաշեց դեպի Աուստերլից:

Աուստերլիցի պարտությունը գինադադար կնքել տվեց ուսաների և Ֆրանսիացիների միջև: Սակայն այդ խաղաղությունը հաստատուն չեր: Նապոլեոնը հարձակվում եր Պրուսիայի վրա, և ցարական կառավարությունը վորոշեց ոգնություն ցույց տալ այդ յերկրին: Նապոլեոնի հարձակման ժամանակ դերմանացիներն արտասովոր վախկոտություն հայտարարեցին: «Ամբողջ Պրուսիայի վրայով մեծ բանակի կատարած հաղթական յերթի ժամանակ պրուսական ուժեղ ջոկատները խայտառակ կերպով նահանջում էյին Փրանսիական աննչան ուժերի առաջ և ամոթալի կերպով հանձնում բերդերը համարյա առանց դիմադրության»: Այսպես ե գրում այդ ժասին ժամանակակիցներից մեկը (Նազարովը):

Պրուսացիների պարտությունը տագնապ առաջացրեց ցարական կառավարության մեջ՝ իր սեփական սահմանների նկատմամբ: 1806 թվի հոկտեմբերի վերջին ուսական զորքերը սահմանն անցան Գրոզնոյի մոտ: Ռազմական դործողությունների թատերաբեմն եր հանդիսանում Արևելյան Պրուսիան, վորտեղ յոթնամյա պատերազմի ժամանակ ուսական զինվորները բազմիցս վախուստի էյին մատնել Ֆրեդրիխ II-ին:

Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար եր նշանակված զառամած Կամենսկին, վորն իր մասին հետևյալն է գեկուցել Ալեքսանդրին. «...վոչինչ չեմ տեսնում, ձիով գնալ համարյա չեմ կարողանում... քարտեղների վրա տե-

դերը գտնել բոլորովին չեմ կարողանում, իսկ յերկրները չգիտեմ... Գրագրութեան ամենափոքր մասին, վոր բաղկացած է լինում 6 թերթից... չեմ կարողանում յերկար դիմանալ: Ստորագրում եմ՝ չգիտեմ թե ի՞նչ...»:

Ուժասպառ անող աշնանային մարտերից հետո ուսուկան բանակը նահանջում էր դեպի Պրեյսիչ - Յլլաու: Կամենսկուն փոխարինեց Բեննիգսենը - ինտրիգան, կարյերիստ և շատ միջակ մի զորասպետ:

Ռուսական բանակը նահանջում էր յերեք զորասյուսներով: Բազրատիոնը վերջապահի հրամանատարն էր, վորը նա բաժանեց յերեք ջոկատի, նրանցից ամեն մեկին հրամայելով քողարկել նահանջող զորասյան յերթը:

Նպուլեոնը, լսելով նահանջի մասին, վորոչեց կտրել ուսուկան բանակի ճանապարհը դեպի Ռուսաստան: Նա Սուլտին և Դավուին հրամայեց սկսել ուսանների թևանցումը աջ կողմից, Նեյին հրամայեց սկսել ձախ կողմից, իսկ Ռոբերտին և Մյուլբաաի հեծելազորին՝ հետապնդում կատարել:

Սկսվեցին ծանր, հյուժող մարտերը դարան, մտած հա- կառակորդի հետ: Բազրատիոնի ջոկատներն իրենց վրա էյին վերցնում հակառակորդի ծանր հարվածները, հնարափորություն տալով դիտավոր ուժերին՝ շարունակելու իրենց նահանջի յերթը: Բազրատիոնը գեկուցեց դիտավոր շտաբին. «Առանց շիթութեան, բաց անելով հրացանային ուժեղ կրակ, գնդերը հետ են մղել հեծելազորի զրոհները, մի քանի անգամ սվինամարտի յեն անցել և իրենց համար ճանապարհ մաքրել»:

Բանակը նահանջում էր, ճանապարհին թողնելով իր գումակները...

Բազրատիոնին գեկուցեցին, թե անհրաժեշտ է այդ գումակները թողնել:

Բազրատիոնը վրդովվեց.

— Ինչո՞ւ համար ենք մենք վերջապահ: Նրա համար, վոր հակառակորդին շտանք վոչ մի սայլ, վոչ մի անիվ: Յե՛վ գումակները փրկված էյին:

Բազրատիոնը դանդաղ էր նահանջում: Ուժասպառ յե-

գած զորքերը հաճախակի դադար էյին առնում: «Հարկավոր էր ուսուկան առողջություն և համբերություն ունենալ, — պատմում է այդ յերթերի մասնակիցը, — այդ բոլորին դիմանալու համար... Սեղծ զինվորն առավել սողում ուրվականի նման, և հենվելով իր հարևանի վրա՝ ջնում է քայլելիս... Այդ ամբողջ նահանջը յես պատկերացնում եմ ավելի շուտ վորպես յերազ, քան իրականություն: Մեք զինվորն այդ տեսակետից այնպիսի համբերություն ունի, վորը դերագանցում է ամեն տեսակի փիլիսոփայությունից»:

Ռուսական բանակը մեծ աղետների դիմացավ: «Թե ինչեր կրեցին այն ժամանակ ուսու հերոս-զինվորները, կովելով հայրենիքի սահմաններից այն կողմը, իրենց համար բոլորովին խորթ շահերի համար, դժվար է արտահայտել, և այդ այն ժամանակ, յերբ սպաներն ու զինվորներն ամխնեբով ոտնիկ չէյին ստանում» («Ռուսական ստարինա», 1890, 6-րդ դիրք, 186 էջ): Ամենից ավելի տանջում էր քաղցը: «Հացի պակասի մեջ հանցավոր էյին պետկազմի անհոգությունը և նրա անզորությունը՝ մթերապաշարների վարչութեան մեջ սողոսկած չարաշահությունները վերացնելու գործում: Մի անգամ բանակում զոյություն ունեցող քաղցի մասին ներկայացված ռապորտին Բեննիգսենը պատասխանել է. «Հարկավոր է համբերել կարողանալ: Ինձ էլ ճաշին միայն յերեք տեսակ են տալիս»: Ուտելիք առնելու համար փող էյին տալիս, սակայն փողով ինչ կարելի յեր գնել այնտեղ, վորտեղ չէր ճարվում: Հացը հազվադեպ էր հասնում Բազրատիոնի ավանդարդին: Նրա զինվորները քաղցից ուռչում և մեռնում էյին» (Միխայլովսկի-Դանիլսկի):

Բազրատիոնն անզոր էր իր զինվորներին ողնելու. նրա ներկայացրած ռապորտներն ապարդյուն էյին մնում, և նա էլ ավելի յեր դայրանում Բեննիգսենի — այդ անչնորհ և ձեռքից անմաքուր գերմանացու դեմ:

Բազրատիոնի անվրդովությունը, նրա վոչ-շտապողականությունը և հաստատակամությունը զինվորներին էր փոխանցվում:

1807 թվի հունվարի 24-ի վաղ առավոտյան Փրանսի-

ացիները հասան Բաղրատիոնին: Այդ մի ծանր ուր եր վեր-  
ջապահի համար: Ֆրանսիացիները կատաղորեն առաջ ելին  
նետովում: Բաղրատիոնը, վորը վերջապահի համար պատվի  
դործ եր համարում «հակառակորդին վոչ մի սայլ, վոչ մի  
անխլ չտալը», հետ մղելով կատաղի գրոհները և հմտորեն  
մանյովրներ անելով՝ ջոկատը գիշերելու տեղը հասցրեց  
միմիայն յերեկոյան ժամը 11-ին, այդ ուրը անդադար մար-  
տի հետ միասին անցած լինելով 28 վերստ ճանապարհ:

Ռուսական բանակի գլխավոր ուժերը մոտենում ելին  
Լանդսբերգին: Բաղրատիոնին հրամայված եր վերջապահի  
հետ միասին կանդ առնել այդ քաղաքի մոտ:

Նապոլեոնը, հաշվի առնելով, վոր ռուսական բանակը  
մարտը կընդունի, Սուլտի, Դավուի և Նեյի կորպուսնե-  
րին հրամայեց շտապել դեպի Լանդսբերգ: Ռուսները նա-  
հանջեցին դեպի Պրեյսիչ-Նյաու: Բաղրատիոնը քողարկում  
եր նահանջը: Գրյունհեֆկենի անտառի մոտ նա հարկազու-  
ված յեղավ ընդունել մարտը: Հակառակորդն արդեն յերեք  
վերստի վրա յեր գտնվում: Բաղրատիոնը սպասում եր,  
մինչև վոր վերջանար ռուսական բանակի գլխավոր ուժե-  
րի դուրս բերելը: Հունվարի 26-ին նա դիրք գրավեց Տենկ-  
նիտեն և Վաչկետեն լճերի միջև: Նրա թիկունքում, Նյ-  
լաու կոչվող փոքրիկ քաղաքում, գտնվում եր Բարկլայ դե-  
Տոլլի ռուսական ջոկատը: Բաղրատիոնի վրա հարձակ-  
վեց Մյուրատը, վորին միացան Ռոթերոյի և Սուլտի կոր-  
պուսների զորամասերը: Մարտի դաշտը ժամանեց Նապո-  
լեոնը և անձամբ եր ղեկավարում Բաղրատիոնի ջոկատի  
վրա հարձակված Ֆրանսիական զորքերի զործողութուն-  
ները:

Համառ ճակատամարտ սկսվեց քաղաքի փողոցներում:  
Բաղրատիոնի ջոկատին այստեղ սպառնում եր չըջապատում  
և լիակատար վոչնչացում: Սակայն Բաղրատիոնը կարողա-  
ցավ իր զորքերը դուրս բերել Նյաուլից, թույլ չտալով,  
վոր Նապոլեոնն իր ճնշող ուժերով ջախջախի իրեն: Բաղ-  
րատիոնի ջոկատի ցույց տված համառ գիմարությունը  
ռուսական բանակին հնարավորություն տվեց խույս տալ  
վաղաժամ մարտի մեջ մտնելուց:

Լույս հուլիարի 27-ի գիշերը Ֆրանսիական և ռուսա-  
կան բանակները կուլի ելին պատրաստվում Պրեյսիչ—Նյ-  
լաուի մոտ: Ռուսական բանակի գլխավոր հրամանատար  
Բեննիգսենը բանակն այնպիսի դրության մեջ գրեց, վոր  
նա, լիառատ հունձ հանդիսանալով հրետանային կրակի  
համար, զրկված եր մանյովրելու հնարավորությունից և  
պասսիվ պաշտպանության եր դատապարտված: Ռազմաճա-  
կատի ուղղությամբ յերեք վերստ տարածության վրա  
կանգնած ելին 4½ դիվիզիաներ<sup>1)</sup> պահեստում ունենալով  
հեծելազորի մի մեծ ջոկատ:

Բաղրատիոնին, վորպես ավելի պակաս աստիճան ու-  
նեցողի, չտվին առանձին ջոկատի հրամանատարությունը:  
Նա Դոխտուրովին կից եր դործում:

Ռուս զինվորն այդ մարտում խիզախության հրաչքներ  
ցույց տվեց, թեև ճակատամարտի յեղքը կանխորոշված եր  
Բեննիգսենի ապիկար ղեկավարությամբ: Զինվորները հա-  
ճախ ավելի մեծ հնարագիտություն ելին ցուցաբերում,  
քան սպաները: Մի բնորոշ դեպք ե պատմում ռազմական  
պատմարան Միխայլովսկի-Դանիլսկին.

«Նեյի կորպուսի առաջին կրակոցներից մեր սպաներից  
ինչ-վոր մեկը բացականչեց.— Մենք չըջանցվա՛ծ ենք:—  
Ի՞նչ անենք վոր,— ասաց այնտեղ կանգնած մի զինվոր:—  
Չեղքելով կանցնենք»:

Այդ մարտի նկարագրության մեջ մենք գտնում ենք  
հետևյալ հետաքրքիր մանրամասնությունները. «Մինչև այդ  
ժամանակ յեղած պատերազմներից վոչ մեկում ձմեռ ժա-  
մանակ չեն դործել այնպիսի մոլեզնությամբ, ինչպես մեր  
նկարագրած դարաչըջանում: Ռուսներն ու Ֆրանսիացիները  
հաղթահարում ելին սառնամանիքը, խոր ձյունները, ճա-  
նապարհազրկությունը: Միայն հունվարյան գիշերների  
խավարն եր դադարեցնում արյունհեղությունը: Մար-  
տը դադարելուց հետո զինվորները պառկում ելին սա-

1) Դիվիզիան այն ժամանակ ուներ միջին հաշվով 10,600 ուլին 2700  
թուր և 54 դաշտային հրանոթ:

ած գետնին՝ կարճատև հանդսախ համար և մեռածի նման ջնտմ էլին: Յերբ լուսածագին հարկավոր էր լինում վեր կենալ գիշերելու տեղից, դժվար էր լինում քնածներին արթնացնելը: Քնաթաթախ դրուժյամբ նրանք սպուշի պես էին նայում, իսկ ամենից թույլերը ճամբարի վայրից մի փոքր հեռանալով, պառկում էին ձյան վրա և նորից ջրնում»:

Յերեք ամսվա դադարից հետո, վորը տեղի ունեցավ Պրեյսիշ-Եյլաուի կույից անմիջապես հետո, ուսուսական բանակը Լաուզեն գետակից նահանջում էր դեպի Հայլբերգ:

Վերջապահ, վորի հրամանատարն էր Բադրատիոնը, դիմանում էր Ֆրանսիացիների հարձակմանը: Գետակի մոտ Ֆրանսիացիները հարկադրեցին ընդունել մարտը: Ռուսական վերջապահի դրուժյունը վտանգավոր էր, — նա հեշտությամբ կարող էր կտրվել բանակից: Բադրատիոնը, ջանալով դրուժյունը փրկել, նետվեց մարտի ամենատաք մասը: Կարտեչը սպանեց Բադրատիոնի ձին: Մյուսապես հարձակվում էր ճակատից, թևին սպառնում էր Սուլտի շրջանցումը: Բադրատիոնը հետևակով հետ էր մղում հակառակորդի ճնշումը: Ֆրանսիացիների հեծելազորը հետապնդում էր մեր ուլաններին և արդեն ուսուսական հետևակի թիկունքումն էր գտնվում:

Մարտի ժամանակ Բեննիգսենի կողմից յեկավ գետնաբալ Ֆոկը:

— Գլխավոր հրամանատարը հրամայեց պահպանել դիրքերը, — հայտնեց նա Բադրատիոնին:

Տանջված, բորբոքված աչքերով, խարույկի մոտ մրտոված Բադրատիոնը հոգնած դիտում էր զուգված-զարգարված շտաբի գետնաբալին:

— Իշխան, ի՞նչ գեկուցեմ գլխավոր հրամանատարին, — անհամբերությամբ հարցրեց Ֆոկը:

— Ձորքերն ուժասպառ են յեղել և այլևս հնարավոր չէ դիմանալ հակառակորդի հարձակումներին՝ առանց ամբողջովին կարված լինելու վտանգին յենթարկվելու:

Ֆոկը գոռոզաբար բղավեց Բադրատիոնի վրա.

— Յերբե՛ք չի պատահել, վոր գլխավոր հրամանատարի հրամանները հնարավոր չլինեն կատարել:

Բադրատիոնը բռնկվեց և, բռնելով Ֆոկի ձեռքից, նրան քարշ տվեց կրակի ամենաթունդ տեղը:

— Յես ձեզ ցույց կտամ, թե ինչ բան է հակառակորդի կրակին դիմանալը:

Գնդակներն ու կարտեչը սուլում էին յերկու գետնաբալների գլուխները վրայով: Կրակի տակ յեղած այդ դրուժյունը յերկար շտեկեց — Ֆոկն ընկավ ծանր վիրավորված:

Գլխավոր շտաբում չէին հասկանում այն վտանգները, վոր սպառնում էին վերջապահին, և անհողությամբ էին վերաբերվում վերջապահական մարտերին, վորոնց մեջ ուսուսական գնդերն արյունաքամ էին լինում:

Մյուսապես, վորին սղնության էր յեկել Լաննի կորպուսը, առաջ էր շարժվում: Բեննիգսենը նորից խոշոր սխալ թույլ տվեց և բանակը Ֆրիդլանդի տակ դասավորեց թիկունքը դեպի դեպը: Նա կարճես թե արեց ամեն ինչ, վորպեսզի Նապոլեոնի համար եժան դափնիներ ձեռք բերեր Ֆրիդլանդական հաղթանակով:

Ճակատամարտի նախորդ օրը Ֆրիդլանդական յեկեղեցու դանդակատնից ուսուսները քաղաք յեկող ճանապարհների վրա տեսան փոշու խիտ ամպեր, — դրանք ուժեղ դորասյուններ էին, վոր շարժվում էին դեպի Նապոլեոնը: Այդ մասին գեկուցեցին Բեննիգսենին, սակայն նա վոչ մի ուշադրություն չդարձրեց այդ նախազգուշացումների վրա: Փորձված Բադրատիոնը, վորին չէր կարելի մեղադրել խիզախության բացակայության մեջ, սկսեց համոզել առաջիկա կույի վտանգի մասին:

— Մենք կլախձախվենք:

Բեննիգսենը սառնասրտորեն լսեց և լուռ յերեսը դարձրեց:

Յեվ յերբ արդեն սկսվեց Ֆրանսիացիների հարձակումը և պարտության վտանգն ակներև դարձավ, Բեննիգսենը հրաման տվեց դիրքերը թողնել: Բայց արդեն ուշ էր: Բեննիգսենն արեց ամեն ինչ, վորպեսզի ուսուսական բանակը ջախջախվի: Անդրիական գետնաբալներից մեկը, վոր դու-

ներվում էր Բեննիգսենի գլխավոր շտաբում, այսպես է պնդատել ուսական զորքերի վարմունքը Ֆրիդլանդի մոտ. «Նրանք կհաղթանակեյին, յեթե միայն արևությունը կարողանար հաղթանակ բերել... Նրանք լիակատար չափով արժանի էյին գովասանքի ու դարմանքի յուրաքանչյուր կողմից, ովքեր տեսել են Ֆրիդլանդի կռիվը»:

Շուտով այդ կովից հետո ավարտվեց 1807 թվականի կամպանիան:

V

1812 թվականի պատերազմի ժամանակ Բազրատիոնը խոշոր նշանակում ստացավ—յերկրորդ բանակի հրամանատար: Նրա հրամանատարության տակ էյին գտնվում յերկու հետևակ և մի հեծելազորային կորպուսներ—ընդամենը մոտ 50 հազար հոգի և 180 հրանոթ: Բանակը մոտ 100 կիլոմետր ճակատ ուներ—Նեմանի և Բուգի միջև: Առաջին բանակի հրամանատարն էր Բարկլայ դե Տոլլին: Յերկու հրամանատարների նշանակումը, վորոնք անկախ էյին միմյանցից, չէյին միավորված ընդհանուր ղեկավարությամբ և հակասական հայացքներ ունէյին Նապոլեոնի դեմ պատերազմ մղելու նկատմամբ,—անտեղի պայքար և յերկպառակություն առաջացրեց նրանց միջև: Այդ բանում հանցավոր էր Ալեքսանդրը—վախկոտ և վոչ անկեղծ մի մարդ:

Յերբ Նապոլեոնի զորքերն անցան ուսական սահմանը, Բազրատիոնն ուներ վեց դիվիզիա, վորոնց դեմ հակառակորդն ուղարկեց տասնվեցը: Ռուսական հրամանատարությունը, նկատի ունենալով Նապոլեոնի զորքերի քանակական մեծ գերակշռությունը, վորոչեց հետ քաշել իր զորքերը՝ բոլոր բանակներն իրար միացնելու համար: Բազրատիոնին հրաման էր ուղարկվել նահանջել դեպի Սմոլենսկ՝ Բարկլայի հետ միանալու համար:

Հունիսի 29-ին Բազրատիոնը Վոլկովիսկից դուրս յեկավ Մինսկի ուղղությամբ: Նապոլեոնը Բազրատիոնի դեմ դուրս բերեց մարշալ Դավուին՝ 50 հազար հոգով, վորոնք նույնպես Մինսկ ուղևորվեցին, բայց ուրիշ ճանապարհով, վորպեսզի չըջանցեն և կտրեն Բազրատիոնի նահանջի ճանապարհը: Բացի դրանից, Նապոլեոնը վեստֆալյան թագավոր ժերոմ Բոնապարտին հրամայեց իր զորքերը շար-

Ժեղ Նովոգորոզովի վրա՝ կանխելու համար Բազրատիոնի հնարավոր շարժումը դեպի այդ վայրը:

Նապոլեոնը վորոշել էր վոչնչացնել Բազրատիոնի բանակը կամ ստիպել նրան անձնատուր լինել: Բազրատիոնի զորամասերի դրուժյունը շատ վտանգավոր էր:

Հուլիսի 1-ի գեղերը Նապոլեոնը Դավուլին հրաման ուղարկեց. «Այսոր արդեն տարակույս չկա, վոր Բազրատիոնը Բրժենցից անցել է Գրոզնո, Գրոզնոյից անցել է Վիլնայից վեց լյո հեռավորության վրա և ուղևորվել է Սվենցյանի: Յես կազմակերպել եմ յերեք ուժեղ զորասյուն՝ նրան հետապնդելու համար: Բոլոր յերեքն էլ ձեր հրամանատարության տակ են»:

Բազրատիոնին հետապնդում էին—

- 1) Դավուլն՝ 50 հազար զորքերով.
- 2) Պոնյատովսկին՝ 35 հազարով.
- 3) Ժերոմ Բոնապարտը՝ 16 հազարով.
- 4) Գրուչին՝ 7 հազարով և
- 5) Լատուր-Նորուրը 8 հազարով:

Բազրատիոնը, լսելով վոր իր թիկունքում Ժերոմ Բոնապարտն է դառնում և վոր Մինսկը գրավված է Դավուլի կողմից, նահանջում է դեպի Սլուցկ:

— Ընկել ենք ծուղակի մեջ, հարկավոր է դուրս պրծնել,— ասում էր նա:

Բազրատիոնը մտադրություն ուներ դեպի Մինսկ իր համար ճանապարհ բաց անել ուժով, բայց լսելով հակառակորդի քանակական հսկայական դերակշռության մասին, նա փոխեց իր ուղղությունը և դնաց Մոզիլի կողմը՝ միացում վորոնեյու Բարկլայի հետ: Բազրատիոնը պատասխանատվության դրացում ուներ. այստեղ նա սխիլ յեր յենթարկում վոչ միայն բանակը, այլև Ռուսաստանը: Մինսկ դնայն անտառների ու ճահիճների միջով, ճանապարհին չունենալով կենսամթերքների պահեստներ (առանց մատակարարման)— անմտություն էր:

Բազրատիոնը, հմտորեն մանյովրելով՝ դուրս յեկավ Նապոլեոնի ծուղակից: Ֆրանսիական զենեքայինները, վո-

րոնք ձեռքից բաց էին թողել Բազրատիոնին, հետո այդ բանի հանցանքը միմյանց վրա էին պցում:

Բայց Ալեքսանդր 1-ը անբավական էր Բազրատիոնից նրան ուղղած նամակում Ալեքսանդրը հանդիմանում էր նրան. «Ձեր ուղղությունը՝ սկզբում դեպի Վիլնյակա, իսկ հետո Մինսկ՝ վերցրած էր այն հույսով, վոր այդքան հաճախակի արշավանքների մեջ յեղած լինելով մեր պանծալի զորավար իշխան Սուվորով-Իտալիյսկու հետ, դուք կկանխեք հակառակորդին սույն կարևոր կետերում... Սակայն այժմ հարկավոր է խորհել ապագայի, և վոչ թե անցյալի մասին...»

Նապոլեոնի համար ահներև դարձավ, վոր Բազրատիոնն այս անգամ ազատվեց: Նապոլեոնը ցատում է մեջ եր ընկել դրանից և իր շտաբի պետ Բերտյեյին հրամայեց Բազրատիոնի անհաջող շրջապատման դիտավոր հանցավորին՝ իր յեղբայր Ժերոմին հաղորդել հետևյալը. «Հայտնեցեք վեստֆալյան թագավորին, վոր յես չափից դուրս դժգոհ եմ այն բանից, վոր նա չի տվել իր բոլոր թեթև զորքերը իշխան Պոնյատովսկուն՝ Բազրատիոնին հետապնդելու համար, վորպեսզի տաքնապի մեջ ընկներ նրա կորպուսը և կանգ առներ նրա շարժումը... Ասացեք նրան, վոր հնարավոր չէ ավելի վատ մանյովրել, քան նա յե արել: Ասացեք նրան, վոր իմ մանյովրների բոլոր պատուհները և այն ամենահիանալի դիպվածը, վորը տեղի ունեցավ պատերազմում, կորստյան են մատնված: պատերազմի առաջին կանոնների տարրինակ մոռացման հետևանքով»:

Իսկ Բազրատիոնն այդ որերին գրում էր Յերմոլովին. «Հաղիվ հաղ դուրս պրծա դժոխքից: Հիմարները դուրս թողին ինձ իրենց ձեռքից: Հիմա գնում եմ դեպի Մոզիլ. դուցե նրանց ծուղակի մեջ պցեմ»:

Բայց Նապոլեոնը չէր մտածում ձեռքից բաց թողնել Բազրատիոնին: Նա հրամայեց. «Հարկավոր է կամ Բազրատիոնին ստիպել Մոզիլը գնալ, կամ հետ չպրտել նրան Պրինսկի ճահիճները: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում Ֆրանսիական զորամասերը կարող են Վիտեբսկ մտնել Բազրատիոնից առաջ, և Բազրատիոնը կտրված կլինի»:

Այս անգամ ևս Նապոլեոնի մտադրութիւնն իրականաց-  
նելու դործում նրան խանդարեց վեստֆալյան ապիկար  
թագաւորը, վորին Նապոլեոնը արհամարհական ձևով գրեց.  
«վոր դուք իրազեկ չէյիք դարձված այն մասին, թե Բազ-  
րատիոնը վորքան դորք ե թողել Վոլիւնում, վոր դուք  
չգիտեյիք, թե քանի ղիվիլիա կա նրա մոտ. վոր դուք  
նույնիսկ չեք սկսել հետապնդել նրան և վոր նա կարո-  
ղացավ իր նահանջը կատարել այնքան հանդիստ կերպով,  
վոր կարծես թե իր հետևում վոչ վոք չկար, — այդ բոլորը  
հակառակ ե այն ամենին, ինչ վոր թելադրում են ղինվո-  
րական կանոնները»:

Հետախուզութեան և լրտեսների միջոցով հետևելով  
Բազրատիոնի շարժմանը, Նապոլեոնը իր նախատեսումները  
կառուցում եր այն հաշիւով, վոր նա Բորիսովկայում դեմ  
առնելով Դաւիտի գորքերին, կփորձի Դնեպրն անցնել և ղնալ  
Սմոլենսկի վրա: Այդ բոլոր նկատառումների մասին Նա-  
պոլեոնը հայտնեց մարշալ Դաւիտին:

Բազրատիոնը գտնվում եր Նեսվիթում, յերբ հուլիսի  
10-ի յերեկոյան նրան ղեկուցեցին, թե Դաւիտն Մինսկումն  
ե, իսկ ժերոմը շարժվում ե Նովոդերոզովից: Այդ բոլորը  
վկայում եր նոր շրջապատման մասին, և Բազրատիոնն  
շտապեց հեռանալ Սլուցկ:

Բազրատիոնը նորից վտանգավոր դրութեան մեջ եր:

Նապոլեոնն արդեն նախորոք ճաշակում եր Բազրատի-  
ոնի գորքերի շրջապատումը:

— Նրանք իմ ձեռքումն են գտնվում:

Բազրատիոնը Սլուցկում իմացավ, վոր Դաւիտն հե-  
ծելազորն ուղարկել ե Բորբուլսկ, և նրա վերջապահի վրա,  
վորի հրամանատարն եր Պլատովը, հարձակում են դործում  
Փրանսիացիների խոշոր ուժեր: Բազրատիոնը, դուրս  
պրծնելով հետապնդումից, հասավ Բերեզինա գետին Բոր-  
բուլսկի մոտ, անցավ Բերեզինան և ուղևորվեց ղեպի Դնե-  
պրը, վորպեսզի այդ գետն անցնի Մոզիլի մոտ, սակայն  
հակառակորդն արդեն կարողացել եր գրավել Մոզիլը. և  
այն ժամանակ Բազրատիոնը մարտով հետ քաշվեց, Ռա-

ևսկու ղիվիլիային հրամայելով Դաշկովկայի մոտ պահել  
Դաւիտի գորքերը:

Բազրատիոնը գորքերը տանում եր ղեպի Սմոլենսկ,  
կիզիչ շողը հյուսիսում եր ղինվորներին: Հակառակորդը զա-  
լիս եր նրանց հետքերով, և Փրանսիական ղիվիլիաներն  
արդեն անցնում էյին Ռուզնյան:

«Յես չունեմ վո՛չ խոտ, վո՛չ վարսակ, վո՛չ հաց, վո՛չ  
ջուր, վո՛չ ղերք», — գրում եր Բազրատիոնը Յերմոլովին:  
Նամակում ղղացվում եր, վոր Բազրատիոնն անբավական  
եր Բարկլայից, վորը վորպես գլխավոր հրամանատար՝  
թշնամուն թույլ եր աալիս ներխուժելու հայրենիքի խոր-  
քերը:

Բազրատիոնը չի կարող հաշտվել այդպիսի ներխուժ-  
ման հետ: Նա պահանջում ե կովել թշնամու դեմ: Արակ-  
չեկին ուղղած նամակում, ղիտենալով, վոր նամակը տրվե-  
լու յե Ալեքսանդրին, նա գրում ե. «Յես վոչ մի կերպ չեմ  
կարողանում մինիստրի (Բարկլայի) հետ լինել: Ի սեր աստ-  
ճու, ուղարկեցեք ինձ, ուր ուզում եք, թեկուզ վորպես գըն-  
դի հրամանատար՝ Մոլդավիա կամ Կովկաս, բայց այստեղ  
չինել չեմ կարող. և ամբողջ գլխավոր շտաբն այնքան  
լցված գերմանացիներով, վոր ոուսը հնարավորութիւն  
չունի ապրելու, և վոչ մի ոգուտ չկա»:

Գլխավոր շտաբն, իրոք, աղտոտված եր գերմանացի-  
ներով, մի բան, վոր մեծ անվստահութիւն եր առաջաց-  
նում ամբողջ ոուս ժողովրդի մեջ ղեպի գերագույն հրա-  
մանատարութիւնը:

Ոգոստոսի 15-ին Բազրատիոնի և Բարկլայի բանակ-  
ները մոտեցան Սմոլենսկին: Դրանից առաջ՝ 38 որվա մեջ  
Բազրատիոնի բանակը կովելով անցել եր 750 վերստ, կարգ-  
ու կանոն պահպանելով և թույլ չտալով, վոր հակառակոր-  
դը շրջապատի իրեն: Բազրատիոնը Սմոլենսկում դարձավ  
Բարկլային յենթակա:

Չնայած Բարկլայի հանդեպ ունեցած իր ամբողջ թըշ-  
նամանքին, Բազրատիոնը, թեև աստիճանով ավելի բար-  
ձր եր, այնուամենայնիվ անառարկելիորեն յենթարկվեց

Բարկլային, զբանով ցույց տալով կարգապահութեան ուրիշակ:

Ներկայանալով Բարկլային, Բագրատիոնը զեկուցեց.

— Յես ձեզ ներկայանում եմ՝ վորպես պետի: Այժմ ժամանակը չե հաշի նստելու աստիճանի բարձրութեան հետ: Ռուսաստանը վտանգի մեջ է... մենք պետք է մտածենք միայն հայրենիքի փրկութեան մասին և այդ նպատակին ուղղենք մեր ընդհանուր ջանքերը...

Նապոլեոնը թեանցեց Սմոլենսկը, ուղևորվելով դեպի Դորոգորով: Այդ նույն տեղը շարժեց իր զորքերը Բագրատիոնը, վորպեսզի խոչընդոտ հանդիսանա Փրանսիացիներին՝ կորելու Մոսկովայի մեծ ճանապարհը: Փրանսիացիների դեմ նա ուղարկեց Լյուքսեմբուրգի պրինցի դիվիզիան: Սակայն այդ դիվիզիան դուրս չեկավ մեծ ուշացումով և Նեվերովսկու կորպուսը ծանր, դրուժյան մեջ գրեց: Նեվերովսկու ջոկատը Չարլախովեց, վորի հետևանքով հետևյալ որը սղոստոսի 16-ին, Նապոլեոնը մոտեցավ Սմոլենսկին:

Սմոլենսկի պատերի տակ տեղի ունեցած հերոսական կռիվներից հետո այդ քաղաքը թողնվեց թշնամուն: Բագրատիոնը չի կարողանում հաշտվել Սմոլենսկը թողնելու և ռուսական բանակի հետագա նահանջի հետ: Արակչեկին ուղղած նամակում նա գրում է, թե Բարկլայը «վոչ թե վատ գեներալ է, այլ անպետք, իսկ նրան հանձնել են մեր ամբողջ հայրենիքի բախտը»: Նա չէր հասկանում և չէր ուզում հասկանալ Բարկլայի ստրատեգիան. դրանով արտահայտվում էր Բագրատիոնի ռազմական մեծ մտահորիզոնի բացակայությունը: Բագրատիոնը դատում էր վորպես քաջաբի զինվոր, այն ժամանակ, յերբ պատմությունը ցույց տվեց, վոր Բարկլայը փորձված և հեռատես ստրատեգ էր: Այս դեպքում իրավացի յեր Բարկլայը, և վոչ թե Բագրատիոնը:

Մարշալ Ժյունոյի կորպուսը, վոր Նապոլեոնի կողմից ուղարկվել էր ռուսական բանակների միացումը խանդարելու համար, հասավ Պրեոբրաժենսկոյե գյուղին, Դենայրի դետանցից վոչ հեռու: Ժյունոն խոչոր սխալ թույլ տվեց՝

հանդիսա տալով իր զորքերին: Բագրատիոնը հետևում էր Ժյունոյին: Նա ուշացրեց նրան Սինյավինո գյուղի մոտ, վորով տակն ու վրա արեց Նապոլեոնի ամբողջ պլանը:

— Դուք Նապոլեոնի բանակի մեջ վերջին դրագոններ լինելուն ել արժանի չեք, — բղավում էր Ժյունոյի վրա Նապոլեոնը:

Ժյունոյի վրա այդ դեպքն այնպես ազդեց, վոր նա շուտով խելագարվեց:

Ռուսական բանակները շարունակում էին նահանջել: Բագրատիոնի կասկածամտությունը չափ ուսահմանից անցնում էր, — նա արդեն դավաճանություն մեջ էր կասկածում Բարկլային: Բանակի մեջ յեղած յերկիշխանությունը և յերկու հրամանատարների թշնամանքին վերջ տրվեց այն ժամանակ, յերբ գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ կուտուզովը: Նոր գլխավոր հրամանատարի վորոշմամբ Բորոգինոյի մոտ գլխավոր կռիվը պետք է տեղի ունենար Նապոլեոնի դեմ:

Բագրատիոնի բանակը գրավում էր դիրքի ձախ թևը — Ռաևսկու մարտկոցից մինչև Շեվարդին — յերկու հետևակ կորպուս և մեկ հեծելազորային: Առաջին կրակոցը լավեց ձախ ճակատամասում: Սեպտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 6-ին, ձախ թևում գրոհը սկսեց Դավուն: Դավունից անմիջապես հետո ծավալվեց Նեյի կորպուսը: Նեյից հետո սկսեց ծավալվել Ժյունոյի կորպուսը: Նապոլեոնը գլխավոր հարվածն ուղղում էր ռուսական մարտական դասավորման ձախ թևի վրա:

Սեպտեմբերի 6-ին, հիմնվելով կուտուզովի տված դիպուկիցիայի վրա, Բագրատիոնը հրաման տվեց բանակին, վորով պահանջում էր բաց տեղերում վոչ մի տեղ կրակ չվառել զիչեր ժամանակ, կերակուր յեփելու համար. բոլորը պետք է տեղավորվեն ձորերում և թաղնված վայրերում. զորքերը պետք է ունենան պատրաստի մթերապաշար՝ չոր կամ յեփած, անպայման 6 որվա համար պետք է չափից դուրս զգուշ լինել հակառակորդի հարձակման դեպքում և ուժեղ ռեզերվներ ունենալ՝ վորքան

Հնարավոր ե—ավելի մոտ իրենց ամբուլթյուններին, ինչպես մարտկոցային, այնպես և դաշտային:

Սեպտեմբերի 8-ի լույս 7-ի վիշերը Բաղրատիոնի զորքերը հանդատանում եյին Բորոզինյան դաշտում: Ուժեղ քամին սլանում եր բացթևանների վրայով: Հեռվում, խավարի մեջ, առկայծում եյին նապոլեոնյան բանակի կրակները:

Նապոլեոնի ուլերատիվ պլանով՝ զլխավոր հարվածը պետք ե հասցվեր բաղրատիոնյան Ֆլեշներին (դաշտային ամբուլթյուններին): Բաղրատիոնի 29 հազար զինվորների դիմաց Նապոլեոնն ուղարկեց 7 հետևակ և 8 հեծելազորային ղեկիղկաներ—մոտ 43 հազար մարդ: Փրանսիացիները Յ անգամ գրոհեցին բաղրատիոնյան Ֆլեշների վրա և հետ մղվեցին, նրանց մատուցների վրա թողնելով արյունաչաղախ դիակների կույտեր:

Փրանսիական զեներալ Պելեն, վոր մասնակցել ե Ֆլեշների վրա կատարված գրոհներին, հետևյալն ե պատմում ուստական հետևակային հակահարձակումներից մեկի մասին.

«Այնքան, վորքան ոժանդակ ուժեր եյին ստանում Բաղրատիոնի զորքերը, նրանք առաջ եյին դնում մեծագույն խիզախությամբ՝ ընկածների դիակների վրայով, տիրապետելու համար կորցրած կետերին: Ռուսական զորասյունները մեր աչքի առաջ շարժվում եյին իրենց պետերի հրամանով՝ վորպես շարժական ամբուլթյուններ, շողշողուն պողպատով ու բոցերով: Մեր կարտեչի կրակի տակ գտնվող մի բաց վայրում, մերթ հեծելազորի, մերթ հետևակի կողմից գրոհի յենթարկվելով՝ նրանք հսկայական կորուստ կրեցին: Բայց այդ քաջարի ռազմիկները, հավաքելով իրենց վերջին ուժերը, սուսձվա նման հարձակվում եյին մեզ վրա»:

Կուտուզովը հասկանալով, վոր բաղրատիոնյան Ֆլեշների վրա հասունանում ե կովի կրիտիկական մոմենտը, ոժանդակ ուժեր ուղարկեց այնտեղ. յերբ նրանք մոտեցան, կովի ամենատաք ժամանակն եր: «Ավելի քան 400 հրանոթներ ջախջախում եյին մեր ձախ թևը. մեր կողմից հրա-

նոթների քանակն այդ ճակատամասում հասցված եր մինչև 300-ի: Սկսվեց մեծ դրամայի ամենից ավելի արյունահեղ տեսարանը: Մի քառակուսի վերստ տարածության վրա դրդում եյին 700 հրանոթներ. Փրանսիացիները համարձակ առաջ եյին դնում, ամբողջ դաշտը դիակներով ծածկելով...» (Միխնևիչ): «Ռուսական հետևակն ու հեծելազորը,—պատմում ե կովի մասնակիցներից մեկը,—լուսթյամբ, քարացած, բայց հրացանների հրահանը քաշելով և պատրույգները բարձրացնելով՝ սպասում եյին Փրանսիացիների մոտենալուն: Սարսավելի յե դնալ հակառակորդի վրա այն ժամանակ, յերբ նա չի կրակում... բայց Փրանսիացիները դնում եյին...»

Բաղրատիոնը, հիացած հակառակորդի խիզախությամբ, հարձակվող Փրանսիացիներին դռաց.

— Բրա՛վո:

Հանդիպելով կրակի, Փրանսիացիներն այնուամենայնիվ, ներխուժեցին ռեզուտը (փոքրիկ ամրոցը) և Նեյի ու Դավուի զորքերն արդեն տիրապետում եյին նրան:

— Ռեղանները վերադարձնե՛լ,— հրամայեց Բաղրատիոնը:

Սկսվեց ուսական հակահարձակումը: Նեյը հարկադրված յեղավ Նապոլեոնին դիմել, խնդրելով ոժանդակ ուժ ուղարկել իրեն և նա ուղարկեց Մյուրատի հեծելազորը: Բաղրատիոնը, վառողի ծխից սևացած, վարում եր մեկը մյուսի հետևից բոլոր գրոհները: Հակառակորդն արդեն անցնում եր Սեմյոնովսկայա գյուղի մոտ գտնվող ձորակը. նրան դժվարությամբ հետ պահեցին ուսական հրետանավորները: Նրանց քաջությունը հիացրել եր հակառակորդին: Վենժուրինին իր հիշողություններում գրում ե. «Ռուսական թնդանոթաձիգները հավատարիմ եյին իրենց պարտքի նկատմամբ: Ռեզուտներ եյին վերցնում, պառկում եյին թնդանոթների վրա և նրանց թշնամուն չեյին տալիս առանց իրենց: Հաճախ մի ձեռքից վիրավորվելով՝ թնդանոթաձիգը մյուսով եր գործում»:

Սեմյոնովսկայա գյուղը բոցավառվում եր: Սարսափելի դրդյուն եր լսվում մարտի դաշտից. վերջինս ծածկ-

ված եր վառողի ծխի մութ ամպով, վորն մեջ անդադար փայլելում էյին պայթող նռնակներն կարմիր կրակները:

Սկսվում եր հակառակորդի ութերորդ դրոհը բազրատիոնյան Փլեչների վրա: Նապոլեոնը մարտի մեջ մտցրեց թարմ ռեզերվները, և հակառակորդի 46 հազար զինվորների դիմաց Բադրատիոնը կարող եր դուրս հանել միայն 18 հազար մարտիկ:

Ժյունոյի, Դավուի և Նեյի կորպուսները սեղմ շարքերով դրոհի դիմեցին:

Այդ—մարտի ամենանշանակալից մոմենտն եր: Մարտի մասնակից Բուտուրլինի ասելով «Թնդանոթների 700 հրաշունչ բերաններ, վորոնք հավաքված էյին վոչ ավելի, քան մի քառակուսի վերստի չափ տարածության վրա, բոլոր ուղղություններով զնդակոծում էյին մի փոքրիկ հարթություն, վոր գտնվում եր Սեմյոնովսկայա դուղի առջև, և մահ էյին ժայթքում պաշտպանվողների և հարձակվողների ահազին կույտերի մեջ: Սույն սարսափելի ժամին հակառակորդի հետևակի ու հեծելազորի բազմաթիվ զորասյունները հաստատուն կերպով շարժվեցին դեպի այդ որհասական հարթությունը, վորի վրա թվում եր, թե դժոխքը ժայթքում ե իր բոլոր սարսափները: Չուր էյին հույս դրել ուսները հարձակվողներին կանգնեցնելու վրա, նրանց վրա ուղղելով ամենադաժան կրակը: Հակառակորդի զորասյունները, վորոնք խիստ կերպով վնասվում էյին կարտեչից, սեղմեցին իրենց շարքերը. այդ շարքերը նոսրացել էյին վոչնչացումից, վորը նրանց մեջ առաջացրել եր ուսների թնդանոթային և հրացանային կրակը, և շարունակում էյին հարձակվել զարմանալի կայունությամբ... Վտանդի ավելացումը միմիայն կրկնակի չափով յեռանդ ու քաջություն եր տալիս Ֆրանսիական զինվորներին, վորոնք կատաղությամբ նետվեցին Փլեչների վրա, վոտքերով տրորելով իրենց ընկերների դիակները, վորոնք նախորդել էյին իրենց՝ փառքի ճանապարհին:

Իշխան Բադրատիոնը, տեսնելով, վոր հակառակորդը տեղ ե չահում, իր զորքերին հրամայեց դուրս գալ նրա դեմ: Ռուսների ձախ թևի զորասյունների ամբողջ դիժը, ա-

րագ քայլով առաջխաղալով, սլիններով խոխեց հակառակորդի դժին: Հարձակումը սարսափելի յեր... դրան հաջորդեց զարհուրելի կոտորածը, վորի ժամանակ և՛ մեկ, և՛ մյուս կողմից կատարվում էյին գերբնական քաջության իսկական հրաշքներ:

Յերկու կողմերի հետևակները, հեծելազորայինները և հրետանավորները, միախառնվելով միմյանց հետ, ներկայացնում էյին ռազմիկների անկանոն վիթխարի դանդաժի մի սարսափելի տեսարան, ռազմիկներ, վորոնք կատաղի հուսահատությամբ նեղն էյին գցում միմյանց: Ռեզերվները միայն, վորոնք յեռում էյին քաջությունից, բայց կարգապահությունից զսպում էյին իրենց, միակն էյին, վոր պահպանում էյին շարքերը և կանգնած էյին անշարժ: Թեև հակառակորդի դրությունը հլանալի յեր քանակի տեսակետից, սակայն ուսները նպաստավոր կերպով դիմանում էյին, մինչև վոր պատահական կերպով վրա հասած դժբախտությունները փոխեցին դործերի ամբողջ դրությունը»:

Բադրատիոնն իր զնդերի հետ միասին շարունակում եր դրոհել հակառակորդի վրա: Հանկարծակի նա վայր ընկավ ձիուց: Աշխատելով թաղցնել իր վերքը, նա փորձեց բարձրանալ, բայց այդ փորձն ապարդյուն անցավ: Վերքը ծանր եր, և հերոս հրամանատարին դուրս բերին մարտի դաշտից:

Բադրատիոնը պառկած եր Սեմյոնովսկի բլրի մոտ և բորբոքված աչքերով, վորոնց մեջ արդեն հանդում եր գլխակցությունը, նայում եր ծխի մեջ պարուրված մարտի դաշտին: Կովի վիճակի մասին մտածմունքն ամբողջովին տիրապետել եր նրան, և նա նույնիսկ չեր նկատում, թե ինչպես հանեցին իր արյունաշաղախ հագուստը, դեն նետեցին, և միայն այն ժամանակ, յերը հանում էյին ձախ վոտքի կոշիկը, նա ատամները սեղմեց, վոր չունքա:

Կորցրած արյունից ուժաթափ յեղած՝ Բադրատիոնը չեր կարողանում նստել: Նրան մոտեցավ չտարի պետը: Բադրատիոնը, ձեռքով ցույց տալով մարտի դաշտը, չըլնջալով թելադրում եր նրան իր վերջին հրամանը:

Թարգմ. Ե. Մանգոյան  
Պատ. խմբագիր՝ Ա. Սարգսյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Սրբագրիչ՝ Ա. Արզախանյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տ. Մինասյան



Գլավխտի լիազոր՝ Տ— 1630. Հրատ. № 4898  
Պատվեր 235. Տիրաժ 5000  
Թուղթ 62X94 . Տպագր. 3½ մամ.  
Մեկ մամ. 32,160 նշան.  
Հանձնված է արտադրության 7 մարտի 1939 թ.  
Ստորագրված է տպագրության համար 17 մարտի 1939 թ.

Պետհրատի I ապարան, Յերևան, Լենինի 65

«Ազգային գրադարան»



NL0219719

40.566

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

**С. БОРИСОВ**  
**БАГРАТИОН**

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.